

3345

28(075)
U-25

ԱՇԱԽԻՉ

ՀԱՅԵԱԼԻԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

ՀԱՅԱԿԱՆ

ԱՅԱՍԵՐԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՎԱՆԱՅ
Խ.

ՈՒՍՏԻՄՆԱՐԱՅԱՅ ՀԱՄԱՐ

ԹԵՂԱՎԱՐԱԿՐԵԱ

Սամեթ Արքային Առաջնութեանց
Ուսուցիչ Կրօնազիստով մեան և Եկեղեցական
պատմութեան հանդիսան Հռոգեոր և Աղջային
Տգիլայ:

5 125 1893

Ըստ

Օ—ԱՅ

Բ ՀՊԱՐԻ ՏՎ Ա ԿԱԹՈՒԿԻ ԷՀՄԻԱՄԻՒ
Ի ՎԱՂԱՐԺԱՊՈՅ

48
1631

889 1631
3956

28(075)

=25

20.04.03

- 5 ИЮНЬ 1898 -

Арм. Благ. Общ.



Учебно-литературный
отдел
Городской Ученый Комитет
5 ИЮНЬ 1898
Ростов-на-Дону



1870

010 89001 1870

Ф. А. А. М. О. П. О. С. С.

1/188

1/188

ՀՐԱՄԱՆԻ

Տ. Տ. ԳԵՐԳԻԵՎ Դ.
ՎԵՃԱՓ. ԵՒ ՄՐԱՋՆԵԳՈՅՆ ԿԱԹՈՎԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

2012



ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԿԵՆԵՐ. - ԳՐԱԴ. - ԸՆԹԱՐ.

Պ. Հ. Բագր. ընկեր.

- 5 ԽՈԽ 1898

ԿԱՍՏՐԱ-ՀԱՅՈՑ Արք. Ելեզ. Օպց.

- Հ. Ո՞ր հաւատո՞ն է ծշմարիտն ու մաքուլը:
- Գ. Քրիստոնէական հաւատը:
- Հ. Դու հաւատով ի՞նչ ես:
- Գ. Քրիստոնեայ:
- Հ. Ի՞նչ կնշանակէ Քրիստոնեայ անունը:
- Գ. Քրիստոսի հետեղող կամ հաւատացող:
- Հ. Ո՞վ դրաւ այդ անունը:
- Գ. Առաքեալը:
- Հ. Ո՞ր տեղ:
- Գ. Անտիոք քաղաքում Ակրիսյի, ուր

- աւելի շատանալով հաւատացելոյ թիւ-
ըր, ընկալան Քրիստոնեայ անունը:
- Հ. Ո՞վէ է Քրիստոնէական հաւատքը հի-
մըն :
- Պ. Մեր Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ :
- Հ. Ի՞նչպէս հիմնեց :
- Պ. Իւր քարոզութեամբ, չարչարանքով
և խաչի մահով :
- Հ. Ունեցած Քրիստոս իրան հետևողներ:
- Պ. Ե.յո, որոց մէջ զինաւորներն են տասն-
երկու Առաքեալք :
- Հ. Ո՞յք տարածեցին Քրիստոնէական հա-
ւատք :
- Պ. Գլխաւորապէս տառն և երկու Առաք-
եալք՝ Հոգւոյն Արբոյ առաջնորդու-
թեամբ :
- Հ. Քրիստոնէի առաջին նշանը ո՞րն է :
- Պ. Քրիստոսի փրկարան Խաչն, վասնորոյ
և խաչակիքում ենք մեր անձը :
- Հ. Խաչակիքեա տեսնեմ :
- Պ. Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն
Արբոյ: Ամէն :

- Հ. Քրիստոնէի վկանանն ու նպատակն
ի՞նչ է:
- Պ. Յաւիտենական երանութիւն :
- Հ. Շնչով կարելի է հասնել այն երանու-
թեան :
- Պ. Երբոր կունենանք դէպի Աստուած կա-
տարեալ Հաւատ, հաստատուն Յոյս,
և անկեղծաւոր Աէր :
- ԴԱՍ Բ.
- ՀԱՆԴԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ.
- Հ. Քրիստոնէական հաւատալիքն ո՞ր գրր-
քումն է գրուած :
- Պ. Հին և նոր Կտակարանի մէջ, զոր կո-
չումենք Աստուածաշունչ :
- Հ. Շնչով եմք կոչում Աստուածաշունչ :
- Պ. Պատճառ որ, Հոգւոյն Արբոյ ազգե-
ցութեամբ գրուեցաւ :
- Հ. Հին Կտակարանը ո՞ք գրեցին :
- Պ. Մարդարէք :

Հ. Խոկ նորը :

Պ. Առաքեալք :

Հ. Հաւատքի համառօտութիւնն ո՞ր տեղ
է դրուած :

Պ. Հանգանակի մէջ, որ է Հաւատքաձեք :

Հ. Ասա Հաւատամքը :

Պ. Հաւատամք 'ի մի Աստուած Հայր ա-
մենակալ, յարարիչն երկնի և երկրի,
երեւեաց և աներեւութից:

Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս,
յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստո-
ծոյ Ճօրէ միածին, այսինքն՝ յէութե-
նէ Ճօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի
լուսոյ, Աստուած Ճշմարիտ յԱստու-
ծոյ Ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արա-
րած:

“Նոյն ինքն 'ի բնութենէ Ճօր, որով
ամենայն ինչ եղեւ յերկնիս և 'ի վերայ
երկրի, երեւելիք և աներեւոյթք :

Որ յաղազս մեր մարդկան և փառն
մերոյ վրկութեան՝ իջեալ յերկնից՝
մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատա-

բելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն
Ճողւովն սրբով:

Որով էաո մարմին, հոգի և միտ, և
զամենայն որ ինչ է 'ի մարդ, Ճշմար-
տապէս՝ և ոչ կարծեօք :

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ,
յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ
յերկինս նովին մարմնով նստաւ ընդ
աջմ Ճօր :

Գալոց է նովին մարմնովն և փառօք
Ճօր 'ի դատել զկենդանիս և զմեռեա-
լըս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ
վախճան :

Հաւատամք և 'ի սուրբ Ճողին՝ յա-
նեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ
յօրէնս և 'ի մարդարէս և յաւետա-
րանս : Որ էջն 'ի Յորդանան, քա-
րոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի
սուրբան :

Հաւատամք և 'ի մի միայն ընդհան-
րական և առաքելական եկեղեցի. 'ի մի
միրտութիւն, յապաշխարութիւն, 'ի

քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց,
'ի յարութիւնն մեռելոց , 'ի դատաս-
տանն յաւիտենից հողւոց և մարմնոց,
յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն
յաւիտենականս :

Իսկ որք ասենն , էր երբեմն՝ յոր-
ժամ ոչ էր Որդի , կամ էր երբեմն՝
յորժամ ոչ էր սուրբ Հոգին , կամ
թէ յոչէից եղեն , կամ յայլէի էու-
թենէ ասեն լինել զՈրդին Աստու-
ծոյ՝ և կամ զՄուրբ Հոգին . և թէ
փոփոխելիք են կամ այլայլելիք , զայն-
պիսին նզովէ կաթողիկէ և առաքե-
լսկան սուրբ եկեղեցի :

Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
ռաջ քան զյաւիտեանս՝ երկիրպա-
գանելով սրբոյ Երրորդութեանն և
միոյ Աստուածութեանն Հօր և Որդոյ
և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից . ամի՞ն :

Հ. Ի՞նչ տեղ սահմանուեցաւ հանդա-
նակը :

Պ. Նիկիոյ ժողովում , ուր ժողոված էին
318 հայրապետք մեծ Առատանդիանու-
կայսեր հրաւերով :

Հ. Ե՞րբ եղաւ այն ժողովը :

Պ. 325 թուին Փրկչական :

Հ. Հանգանակն ով բերաւ ՚ի Հայաս-
տան :

Պ. Գրիգոր Լուսաւորչիկ պատիկ որդին
Երիստակիս Հայրապետ , որ մէկն էր
այն ժողովի անդամներէն :

Հ. Իսկ մեժ Քայուաստոցն ով ասաց :

Պ. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Վանի՞մ մասն է բաժանւում հանգա-
նակը :

Պ. Տասն երկու՝

Ա. Գոյութիւն Աստուծոյ :

Բ. Երրորդութիւն Աստուածային
անձանց :

Գ. Արաքազործութիւն և նախալս-
նամութիւն Աստուծոյ :

Գ. Արաբմասութիւն Որդւոյն Ես-
տուծոյ :

Ե. Զարշարանք և Յարութիւն Քը-
րիստոսի :

Զ. Համբարձումն Քրիստոսի :

Է. Գալուստ Հոգւոյն սրբոյ:

Ը. Եկեղեցի Քրիստոսի :

Թ. Խորհուրդք Եկեղեցոյ :

Ժ. Երկրորդ գալուստ Քրիստոսի:

ԺԱ. Յարութիւն մեռելոյ :

ԺԲ. Ա Երջին գատաստան:

ԴԵՍ Գ.

ԳԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՄԱՅՑ:

Հ. Սատուած ասելով ի՞նչ եմք իմանում:

Պ. Երիքի և երկի և նոցա մշջ եղած
արարածների ստեղծող և նախախ-
նամող :

Տ. Բնչով ես հաստատում Սատուծոյ
գոյութիւնը :

Պ. Երբ որ ուշք ու մոքով կնայինք երկ-
նային և երկրային արարածների վերայ/
և մեր անձին վերայ, և ուղեղ քննու-
թեամբ կտեսնենք, որ այս մեծամար-
մին աշխարհը ինքն իրան չէր կարող
դոյանալ առանց ճարտարապետի, ու-
րեմն մեկ ստեղծող կայ նորանց, և ա-
հա նա է Աստուած :

Հ. Սատուած ո՞ր տեղ է:

Պ. Օօրութեամբ ամեն տեղէ, բայց էու-
թեամբ անբովանդակելի է:

Հ. Սատուծոյ անունն ի՞նչ է:

Պ. Սատուած անուն չունի, բայց տալիս
եմք շատ անուններ՝ նորա գործերին
համեմատ :

Հ. Ո՞յք են այդ անունները:

Պ. Երարիչ, Ստեղծող, Տէր, Տէր Աստ-
ուած, Տէր ամենակալ, Տէր զօրու-
թեանց, Հայր, Թագաւոր, Դատաւոր,
Խշան և այլն :

ԴԱՍ Գ.

ԵՐԻՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԺԱՅՑԻՆ ԱՆՁԵՆՑ.

- Հ. Աստուածային անձինք քանի՞ն են :
- Պ. Երեք, Հայր, Որդի և Հոգի սուրբ,
- Հ. Հայր՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Որդին՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Հոգին սուրբ՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Ուրեմն երեք Աստուած են :
- Պ. Ոչ երեք, թէ պէտ երեք անձինք են,
բայց Աստուածութեամբ մի են, վասն-
որոյ և Աստուած մի է:
- Հ. Ի՞նչ զանազանութիւն կայ երրորդու-
թեան մէջ :
- Պ. Այս զանազանութիւնը, Հայր Աստ-
ուած՝ ոչ ծնունդ է և ոչ բղխումն,
այլ ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն
սրբոյ. Որդին՝ Աստուած՝ ոչ ծնող է

և ոչ բղխումն, այլ ծնունդ է օր՝ իշխ-
ափանից անմարմնաբար. Հոգին սուրբ՝
ոչ ծնող է և ոչ ծնունդ, այլ բղխումն
ի Հօրէ:

Հ. Ուրեմն ինչով կ'զանազանուին մի-
մանցմէն:

Պ. Ընձնաւորութեամբ. զի Հայրն չփ կաչ-
ուի Որդի կամ Հոգի, և ոչ Որդին՝
Հայր կամ Հոգի, և ոչ Հոգին սուրբ՝
Հայր կամ Որդի:

Հ. Բնութեամբ մի՞նչ թէ ոչ :

Պ. Ո՞հ է նոցա բնութիւնը, կամքը, զօ-
րութիւնը, արարչութիւնը, իշխանութ-
թիւնը և փառքը :

ԴԱՍ Ե.

ԱՃԽԱՐԴԻ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ
Ն Ա Խ Ա Խ Ն Ա Մ Ո Ւ Թ Ւ Ւ Կ Կ Կ :

Հ. Ո՞վ ստեղծեց աշխարհը:

Պ. Աստուած:

- Հ. Բնաշխ ստեղծեց:
- Պ. Ոչընչէ:
- Հ. Կոնպէս ստեղծեց:
- Պ. Մէկ և ամենակարող խօսքով:
- Հ. Ստեղծելուց առաջ ի՞նչ դրուժեան
մէջ էր աշխարհը:
- Պ. Խաւար ու մութն էր, և անշխն, ջուրը
բռնած ունէր երկրի երեսը, և Աստու-
ծոյ հոգին շրջում էր ջրերի վերայ:
- Հ. Ոչընչէ քանի՛ բան ստեղծեց:
- Պ. Ութն, երկինք, հող, օդ, հուր, ջուր,
հրեշտափներ, լրս, և մեր հոգիքը:
- Հ. Խսկ միւս երկրային արարածները ըն-
չէ՞ն ստեղծեց:
- Պ. Չորս տարերքէ՞ն՝ որքնիւթեր էին երկ-
րային արարածների:
- Հ. Խսկ երկնայի՞ն մարմինները:
- Պ. Առաջին օրուայ լուսէն, որ նոցա նիւ-
թըն էր:
- Հ. Վանի՞ օրում ստեղծեց:
- Պ. Ա եց օրում:
- Հ. Առաջին օրը ի՞նչ ստեղծեց:

- Պ. Լոյս, և սկսաւ զիշերն ու ցերեկը, և
Ժամանակի սկիզբն :
- Հ. Երկրորդ օրը ի՞նչ արաւ:
- Պ. Զրի մէկ մասրբարձրացրեց, այսինքն՝
ջուրը ջրից բաժանեց, շնորհով առակը
հաստատութիւն, զոր կոչում ենք եր-
կինք:
- Հ. Խսկ երրորդ օրը:
- Պ. Անացած ջրերը ժողովեց փոսերի մէջ,
և երեւցաւ ցամաքն. և երկիրը բղխեց
ծառեր, ծաղկիներ, խոտեղիններ և
բանջար. խսկ ջրերի ժողովը կոչեցաւ
ծով. և երեւցան լճեր, գետեր և աղ-
բիւրներ:
- Հ. Հինգերորդ օրը ի՞նչ ստեղծեց:
- Պ. Օդի թռչունները և ծովի ձկները:
- Հ. Խսկ վեցերորդ օրը:
- Պ. Յամաքային կենդանիքը, և յետոյ
մարդը:

ԳՅՈՒ Զ.

ՄԱՐԴ ՍՏԵՂԾԵԼԸ.— ԱՌԱՋԻՆ ԵԿԵՊԵՑԻ.

Հ. Աստուած ընչե՞ն ստեղծեց մարդը:

Պ. Հողին:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Ա երառաւ հողը և կազմեց մարդոյ մարմինը, և տուաւ նորան բանական հողի:

Հ. Անունը ի՞նչ դրաւ:

Պ. Աղամ. որ կնշանակէ հողին առեղծուած:

Հ. Կինը ի՞նչ տեղին ստեղծեց:

Պ. Աղամի կողքէն, երբոր նա քնած էր, հանեց նորա կողքի ոսկորներէն մինը, և շինեց կին, ու տուաւ մարդուն օդնական, և անունը դրաւ Եւայ. որ կնշանակէ կեանք:

Հ. Այդ գործողութեամբ ի՞նչ հաստատեց Աստուած:

Պ. Ամուսնութեան սուրբ խորհուրդը:

Հ. Աղամ և Եւայ ի՞նչ տեղ էին բնակւում:

Պ. Դրախտում, զոր Աստուած ինքն տընկել էր:

Հ. Աշխարհի որ կողմն էր դրախտը:

Պ. Արևելեան կողմը, Հայաստան աշխարհում:

Հ. Բնով ես հաստատում:

Պ. Արովհեաւ Աստուածաշնչի մէջ զրած չորս գետերը բղխում են Հայոց աշխարհին. Տիգրիս և Եփրատ՝ մի և նոյն անուններով կան. իսկ Փիսովի և Գեհովի անունները փոխուած են և կոչվում են Արաքս և Շորիս:

Հ. Դրախտի մէջ զիխաւոր ծառերն ոչք էին:

Պ. Օառու կենաց և ծառ զիտութեան բարւոյ և չարի:

Հ. Ի՞նչ պատուիրանք տուաւ Աստուած նախաստեղծներուն:

Պ. Հրամայեց ուտել ամենայն ծառերի պտուղները, բայց զիտութեան բար-

- ւոյ և չարի ծառի պտուղը ասաց չու-
տել և մօտ չդնալ, որ չմեռնին:
- Հ. Առաջին եկեղեցին որ տեղ շնուրեցաւ:
- Պ. Դրախտումը, և բաղկացնում էին եր-
կու հոգի, — Եղամ ու Եւայ:
- Հ. Աստուծոյ և մարդոյ մէջ Ի՞նչ ուխտ
կամ պայման կար:
- Պ. Աստուծոյ կողմանէ էր անձակութիւնը,
և այս ուխտի նշանն էր վեհաց ծառը.
իսկ մարդոյ կողմանէ էր հնազանդու-
թիւն, որի նշանն էր՝ բարին ու շարք գի-
տիւնալու ծառը: ՀՕԼՈՒՅ
- Հ. Պահեցի՞ն Եղամ ու Եւայ այդ պայ-
մանը:
- Պ. Ո՛չ. Վասն զի սատանան մանելով օձի
կերպարանք, խարեց զԵւայ, ասելով,
եթէ արդելած ծառի պտուղը ուտէք,
դուք էլ Աստուած կ'զառնաք: Հա-
ւատաց Եւայ օձի խօսքին, կերաւ
պտուղը, և Եղամին ևս ուտեցրեց,
և ընկան անհնաղանդութեան մեղքի
մէջ.

- Հ. Ի՞նչ առաջացաւ մեղքին:
- Պ. Ամօթ, երկիւղ, ողեմաշ աշխատանք,
հիւանդութիւն, և մահ:
- Հ. Մնացի՞ն Եղամ և Եւայ դրախտի մէջ:
- Պ. Ո՛չ. զի Աստուած նոցա անհնաղան-
դութեան համար՝ արտաքսեց զնոսա
դրախտին ձգելով մահուան վճռի տակ:
- Հ. Տուան Աստուած փրկութեան յոյս:
- Պ. Եյ՞. երբոր օձին անիծում էր, ասաց
Աստուած, թէ կոչ գաւակը քո գլու-
խը կջաղջախէ:
- Հ. Ի՞նչ էր նշանակում այդ:
- Պ. Եյն, թէ Աստուծոյ Որդին պիտի մար-
մին առնու կնոջէն, և սատանային յաղ-
թէ, ու Եղամի որդիքը ազատէ:
- Հ. Ի՞նչ է կոչւում առաջին մեղքը:
- Պ. Եղամային կամ սկզբնական մեղք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԽԱՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՈՒԹՅՈՒՆ
7/1. 1922 թ. ԽԱՅԱԿ. — ՓՐԵԴԻ-
ԱՅՆ ԱՐԵՎԱԿԱՆ ԱԽԱՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՈՒԹՅՈՒՆ

ԴԵՍ Բ.

ՄԱՐՄՆԱԾՈՒԹԻՒՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅՑ.

- Հ. Որդին Աստուծոյ երբ առաւ մարմին:
- Պ. 5199 տարի անցնելով աշխարհի ստեղծելու օրին:
- Հ. Ումե՞ն առաւ մարմին:
- Պ. Մարիամ սուրբ կուսէն, որ Դաւիթ մարդարէի և թագաւորի ցեղէն էր:
- Հ. Ի՞նչպէս առաւ:
- Պ. Աստուծոյ հրամանով Գաարիել հրեշտակը գնաց Կազարէթ քաղաքը, և աւետիս տուաւ սուրբ կոյս Մարիամին, թէ քեղմէն պիտի ծնուի աշխարհի Փրկիչը — Աստուծոյ Որդին. և սուրբ Կոյսն յղացաւ Հոգւով սրբով:
- Հ. Ուր ծնաւ Քրիստոս:
- Պ. Ռեդզէմ քաղաքում մսուրի մէջ:
- Հ. Դմացուեցաւ նորա ծնունդը:
- Պ. Եյ՞ որովհետեւ նորա ծննդեան զիշերին հրեշտակները յայտնեցին Հո-

վեներուն, և մէկ անսովոր և մեծ աստղ երևեցաւ արեւելքում, զոր երեք մագեր տեսնելով՝ իմացան և եկան երկրապատճիւն տալ Քրիստոսին:

Հ. Ո՞վ էր Երուսաղէմի թագաւորը:

Պ. Հերովդէս մեծ:

Հ. Կա երբոր իմացաւ այդ՝ ի՞նչ արաւ:

Պ. Վախենալով՝ թէ չզվկուի թագաւորութենան, սպանել տուաւ Ռեդզէհի երեխայքը, երկու տարեկաննեն ցած, որպէս զի նոցա հետ սպանուի և Քրիստոս:

- Հ. Ի՞նչպէս աղասուեցաւ Քրիստոս:
- Պ. Հրեշտակի հրամանով հայր Յովսէփը փախցրեց զնա և մայրը Ճնգիպոսու, և երբոր մեռաւ Հերովդէս, կրկին յետ դարձան Գալիլեայի Կազարէթ քաղքը:

ԳԵՍ ՁԱ.

ԵՒՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

Հ. Յիսուս ի՞նչ էր կոչում ծնուելուց
առաջ:

Պ. Բան Հօր, Միածին, Որդի Աստուծոյ:

Հ. Խոկ ծնուելուց յետոյ:

Պ. Յիսուս, Քրիստոս, Մեսիա, Էմմա-
նուէլ:

Հ. Ի՞նչ է նշանակում Յիսուս անունը:

Պ. Յիսուս՝ Երրայեցւոց բառէ, և կընշա-
նալի Փրկէլ:

Հ. Ի՞նչ պատճառաւ ստացաւ այդ ա-
նունը:

Պ. Որովհետեւ նա պիտի փրկէր մարդկային
ազգը սատանայի գերութենէն և յա-
ւիտենական գատապարտութենէն:

Հ. Ի՞նչ է նշանակում Քրիստոս և Մեսիա:

Պ. Քրիստոս անունը Յունարէնէ, և Մե-
սիա Հրէարէն, և կնշանակեն Օծէալ:

Հ. Ի՞նչո՞ւ եմք ասում Օծեալ:

Պ. Որովհետեւ նա օծեալ էր սուրբ Հոգ-
ով, և այս օծումով եղաւ Քրահա-
նայապետ, Ծագաւոր յաւիտենական,
Մարդարէ և բարձր քան զմարդարէ-
քը:

ԳԵՍ ՁԱ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հ. Ո՞ւր մկրտեցաւ Քրիստոս:

Պ. Յորդանան գետում:

Հ. Կանի՞ տարեկան էր:

Պ. Երեսուն:

Հ. Ո՞ւ մկրտեց:

Պ. Օսքարիս քահանայի որդին Յով-
հանինէս:

Հ. Ի՞նչ հրաշք եղաւ մկրտութեան ժա-
մանակ:

Պ. Երկինքը բացուեցաւ, և Հայրն Աստ-
ուած ձայն տուաւ “Դա է իմ սիրելի
Որդին, որին ես հածեցայ”. և Հոգին

սուրբ աղանու նման իջաւ Գրիստո-
սի վերայ:

- Հ. Ի՞նչ էր նշանակում այդ հրաշքը:
 Պ. Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւ-
 նը, թէ նա է կատարեալ Աստուած և
 կատարեալ մարդ, և թէ նա է Փրկիչ
 աշխարհի:

ԴԵՍ ԺԱ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ.

- Հ. Եւետարանն ի՞նչպէս է նկարագրում
 Քրիստոսի երկրացին կեանքը:

- Պ. Թէ Քրիստոս քարեց իւր կեանքը խո-
 նարհութեամբ և աղքատութեամբ:

1) Կառագութիւն շնչում Երուսալէ-
 մի քաղաքները քարոզութիւն անելու:

2) Չունէր հաստատ բնակարան, այլ
 ինչ տեղ մթնում էր՝ այն տեղ էր կե-
 նում, թէ շնութեանց մէջ, թէ անա-
 պատներում և թէ լեռներում:

3) Խղճում էր հիւանդներուն և մե-
 ղաւորներուն՝ ամենքի վերայ ունէր
 դութ, և չէր զգում մեղաւորներու
 հետ հաց ուտելու:

4) Կա գնում էր հրաւերներում,
 ինչպէս Կանա Գալիլեացւոց հարա-
 նիքը, և Պատթեսու մաքսաւորի և
 Ամմն բորոտի տները:

5) Անխափան քարոզում էր հրա-
 պարախներում, տներում, լեռների
 վերայ, անասպատում և ծովի վերայ.
 Խոկ շարաթ օրերը գնում էր ձըեկց
 ժողովարանը, և մեկնում էր զբքերը:

6) Չունէր հանգստառթիւն ժողո-
 վորդի ձեռքէն, որք օր ու գիշեր նորա
 չորս կողմը պատած էին, մինչև որ շատ
 անդամ հաց չէր կարողանում ուտել:

7) Ուսուցանում էր իշխանութեամբ,
 և ոչ որպէս ձըեկց բարունիքն և կար-
 դացողներն:

8) Առանց կեղծաւորութեան նա-
 խատում էր Փարիսեցիները և Դպիր-

ները և օրէնսդրէաները, և այս պատճառաւ նոքա չէին սիրում զ՞իրիստոս:

9) Ճաղողվրդի հետ խօսում էր իւր աշակերտաց:

10) Երկայնամոռութեամբ համբերում էր աշակերտաց տիմարութեան, տղիսոութեան և փառասիրութեան, և ուրիշ պակասութեանց, և խրատում էր զնոսա:

11) Ամենեին չծիծաղեցաւ, և ոչ թէ մէկին կամ միւսին տիսուր դէմք ցոյց տուաւ, նորա դէմքը պայծառ էր և ուրախ:

12) Պարապ ժամանակ, մանաւանդ գիշերով միշտ աղօթում էր արտասուք թափելով:

13) Ամենայն գործողութեանց մէջ էր համեստ և պարկեցաւ, և հայելի ամենայն առաքինութեանց:

14) Համբերում էր փարիսեցիներու և կարդացողներու անարդանկներին,

որ կոչում էին գնա ուտող, արբեցող, զիւահար, բարեկամ մեղաւորներու և մաքսաւորներու:

15) Դրաւ այնպիսի օրէնքներ, ողբյալիստեան համեմատ են ժամանակի հանգամանքներին, և մարդոյ բարոյական և կրօնական կեանքին:

16) Վատում էր աշխարհի փառքը, վայելչութիւնը և մեծութիւնը, և ամենեցուն այն էր քարոզում, մանաւանդ իւր աշակերտաց:

17) Աիրում էր ձըից ազգը և Երրուսաղէմ քաղաքը, և լաց էր լինում նորա վրայ, տեսնելով նորա ներկայ և ապագայ թշուառութիւնքը, որոց ներքոյ ընկել էր:

ԳԱՍ ԺԲ.

Հ. Ե՞նչ հրաշքներ արտւ Շըրիստոս:

Պ. Ջուրը զինի փոխեց, կոյրերը լուսաւորեց, խերուն լսել տուաւ, համբնե-

բուն խօսիլ, կադերուն գնալ, հիւանդաները և անդամալցները առողջացրեց, մեռեներուն յարութիւն տուաւ, դիւահաները բժշկեց, սակաւ հացով հազարաւոր մարդիկ կերակրեց, ծովի վերայ գնաց, ինչպէս ցամաքի վերայ, հողմերուն սասաեց և ծովի ալիքները դադարեցրեց:

ԴԱՍ ԺԳՆ.

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՒԹԻՒՆ:

Հ. Ո՞վ էր Կրիստոսի մատնողն:

Պ. Յուղոյ Խակարիովտացի, որ Կրիստոսի տասներկու առաքեալներէն մէկն էր:

Հ. Ո՞վքան արծաթ առաւ:

Պ. Երեսուն:

Հ. Յետոյ ի՞նչ արաւ Յուղա:

Պ. Ո՞ւր առաւ իւր հետ ձրեից ամբոխը և ձոռմէական զինուորներ զինքերով, և եկաւ այն պարտէզը, ուր ազօթում էր Յիսուս, և բռնեցին դէմ:

Պ. Յուղա ի՞նչ նշան էր տուել ձրեից:
 Պ. Ձամբոյր, թէ ուժ եւ համբուրեմ, զնա բռնեցէք:
 Հ. Օզջանց նա իւր մեղքը:
 Պ. Եյս, տարաւ արծաթը, և գարձրեց քահանայապետներուն և ծերերուն ու մեղաց զուեց. բայց նոքա չստացան փողը, և նա յուսահատած զնաց ու խեղդուեցաւ:

ԴԱՍ ԺՊ.

ՀԱՐՑԱՐԱՆՔ ԵՒ ՄԱՀ ՔՐԻՍՏՈՒԹԻՒՆ:

Հ. Ո՞ւր տարան ձրեայք դՅիսուս:

Պ. Աննա և Կայիսարիայ քահանայապետներու մօտ:

Հ. Է՞նչ անցք անցուցին Յիսուսի հետ:

Պ. Ո՞չ զիշերը պահեցին ու շատ չարչարեցին, երեսին թքելով, ապտակելով, ծիծաղելով և ծաղը առնելով:

Հ. Առաւոտուն ո՞ւր տարան:

- Պ. Պիղատոս Պնդացու մօտ, որ ձռո-
մայեցիներէն կարգած էր ձրէաստանի
դատաւոր:
- Հ. Պիղատոս ի՞նչ արաւ:
- Պ. Ես տեսնելով՝ Նորա անմեղութիւնը՝
շատ աշխատեց ազատել, բայց հնար
չեղաւ. վասնորոյ առաւ ջուր և ըռաց
ձեռները ասելով՝ "Ես անպարտ եմ
այդ արդարի արիւնէն":
- Հ. ձրէայք ի՞նչ պատասխանեցին:
- Պ. Դորա արիւնը մեր վերայ և մեր որդ.
ւոց վերայ:
- Հ. Ի՞նչ վճռեց Պիղատոս:
- Պ. Քըլիստոս զլիին դրաւ փուշ պսակ,
և վճռեց խաչել զնա. ուստի և մատ-
նեց ձրէից ձեռքը:
- Հ. Ո՞ւր խաչեցին զՅիսուս:
- Պ. Գողգոթայ լեռան վերայ, Խրուսաղե-
մի մօտ:
- Հ. Երա հետ ուրիշներ էլ խաչեցի՞ն:
- Պ. Եյո, երկու աւազակներ. բայց աջա-
կողմեանը զղջալով իւր մեղքը, ար-

- քայութեան արժանացաւ:
- Հ. Խաչի վերայ ի՞նչ էր զրած:
- Պ. Պիղատոս մէկ տախտակի վերայ զրեց
այս բանը, "Յիսուս Նաղովըցի Ձա-
դաւոր ձրէից". և մեխել տուաւ խա-
չի զլիին:
- Հ. Ի՞նչ խմեցրին խաչի վերայ:
- Պ. Յիսուս ջուր ուզեց, բայց նորա փո-
խանակ տուին քացախ խառնած լեզու
հետ:
- Հ. Յիսուս ի՞նչպէս աւանդեց մարդկային
հոգին:
- Պ. Եղաղակեց բարձր ձայնով դէպի ձայրն
Եստուած՝ "Ճայր, Կո ձեռքդ եմ
աւանդում իմ հոգիս":
- Հ. Ի՞նչ է նշանակում բարձրածայն աղա-
ղակելը:
- Պ. Եյն, թէ իշխանաբար է մեռնում, և
ինքն է իշխան մահու, և ոչ թէ մահը
նորան:
- Հ. Քանի՞նշաններ եղան Խաչելութեան
ժամանակ:

Պ. Ա. Եց. 1) արեգակն խառարեցաւ, յետոյ երբոր հոգին աւանդեց, 2) երկիրը շարժեցաւ, 3) քարերը պատառեցան, 4) զերեղմանները բայցուեցան և սրբոց մարմինները յարութիւն առան, 5) տաճարի վարագոյրը պատառեցաւ, 6) կողքեց բղենեց արիւն և ջուր:

Հ. Ի՞նչ էին նշանակում այդ հրաշքները:

Պ. Թէ խաջուածն Վրիխառոս ոչ միայն մարդ էր, այլ և Աստուած էր, որ չարչարեցաւ և մեռաւ միայն մարմնով, և կենդանի էր Աստուածութեամբ, որ անբաժան էր նորա մարդկային բնութենէն:

Հ. Վրիխառոսի կողքէն բղենած արիւն ու ջուրը ի՞նչ նշանակութիւն ունեին:

Պ. Թուրը օրինակ էր աւազանի մլրտութեան, իսկ արիւնը՝ հաղորդութեան խորհրդին:

Հ. Բանական հոգին ուր զնաց:

Պ. Բանական հոգին անբաժանելի Աստ-

ուածութեամբ իջաւ դժոխքը, և ազատեց նահապետաց, մարգարեից և արդարոց հոգիքը, որք սպասում էին նորա այնաեղ գնալուն:

ԴԱՍ ԺԵ.

ԹԱՂԱԽՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հ. Ո՞ր օր թաղեցին զՅիսուս:

Պ. Ուրբաթ օրը, երեկոյեան ժամին, որ է մահուան օրը:

Հ. Ո՞յք իջուցին նորա մարմինը խաչէն:

Պ. Յովսէփ Արեմաթային և “Սիկոյիմոս” Արէից իշխաններն, որք ծածուկ աշակերաններն էին Յիսուսի:

Հ. Ո՞ր թաղեցին:

Պ. Գողգոթայի մօտիկ մէկ սպարաֆղում, որի մէջ կար քարէն փորած գերեզման:

Հ. Թաղելուց յետոյ ի՞նչ պատահեցաւ:

Պ. Նըմայք խնդրեցին Գիղատոսէն զօրականներ գերեզմանին զգուշանալու համար, և գերեզմանի քարէ խուփն էլ կնքեցին:

Հ. Ընչո՞ւ կնքեցին:

Պ. Յիշելով Քրիստոսի բանը, թէ երեք օրէն յետոյ յարութիւն պիտի առնում, կարծեցին թէ աշակերտները կդողանան մարմինը, և կասեն թէ յարեաւ:

ԻԱՍՈ Ժ.Օ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հ. Ե՞րբ յարեաւ Քրիստոս:

Պ. Երբորդ օրը մահէն յետոյ, այսինքն՝ շարաթ երեկոյին դէպի ի կիւրակէ:

Հ. Ի՞նչ պատահեցաւ յարութեան ժամանակ:

Պ. Նըմայք Աստուծոյ իջանելով երկրներէն լուսաւոր տեսիլքով, զլորեց գե-

րեզմանի քարը, և նստաւ նորա վերայ: Հ. Գաերեզմանի պահապաններուն ի՞նչ պատահեցաւ:

Պ. Ահ ու դողը բռնեց զնոսա, և ընկան երեսի վերայ զեանին, ինչպէս մեռեալ:

Հ. Քրիստոսի յարութեան համբաւը տարածուեցաւ:

Պ. Այսո, որովհետեւ պահապաններէն միքանիսը զնացին, պատմեցին քահանայապետներուն ամենայն անցքը:

Հ. Ի՞նչ կարգադրութիւն արին քահանայապետներն:

Պ. Խորհուրդ արին ժողովրդեան ծերերու հետ, շատ փող տուին պահապաններուն, և խրատեցին ասել, թէ մերքնած ժամանակ աշակերտներն եկան ու դողացան Յիսուսի մարմինը:

Հ. Ո՞յք տեսան զՅիսուս յարութենէն յետոյ:

Պ. Մարիամ Մագդաղենացին և միւս իւղաբեր կանայք, աշակերտներն և ուրիշ շատերն, որոց թիւը Պօղոս առա-

ՔԵԱԼ դնում է աւելի քան զհինդ հա-
րիւր:

ԴԱՍ ԺԷ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Հ. Ե՞ր համբարձաւ Քրիստոս:

Պ. Քառասուն օրուայ յարութենէն յե-
տոյ:

Հ. Ո՞ր տեղէն համբարձաւ:

Պ. Զիթենեաց լեռան գլխէն, որ մօտ էր
Երուսաղէմին և Ռեթանիային:

Հ. Ո՞յք կային նորա մօտ:

Պ. Իւր աշակերտները և միւս հաւատա-
ցեալք:

Հ. Ի՞նչ խոստացաւ Յիսուս աշակերտաց:

Պ. Խոստացաւ ուղարկել զողին Առորք,
որ միիթարէ և զօրացնէ զնոսա:

Հ. Ի՞նչպէս եղաւ համբարձումն:

Պ. Յիսուս տարաւ աշակերտները Զիթե-
նեաց լեռան գլուխը, և բարձրացնելով

ձեռները օրհնեց զնոսա, տալով զանա-
զան պատուերներ, և ինքն ազամային
մարմնով համբարձաւ դէպ ՚ի երկին-
քը, իսկ աշակերտները և հաւատացե-
լոց բազմութիւնը պէլացած վերև էին
նայում, բայց Յիսուս զնալով ամպե-
րի մջ, այլ ևս չունենուեցաւ. վասն-
որոյ ամենեքեան յետ դարձան յԱրու-
սադէմ, և սպասում էին նորա խոստ-
մունքի կատարելուն:

Հ. Եյժմ ո՞ւր է Յիսուս Քրիստոս:

Պ. Իւր համբարձման օրէն նստած է Հօր
Սստուծոյ աջ կողմը, Սստուածային
յաւիտենական փառքի մջ, զոր ունէր
աշխարհի ստեղծելուց առաջ:

ԴԱՍ ԺԷ.

ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԴԱԼՈՒՍԾԸ.

Հ. Ե՞ր կատարեցաւ Քրիստոսի խոս-
տումն:

- Պ. Նորա համբարձման տասներորդ օրը,
որ յարութիւն առնելու օրէն կանէ
յիսուն օր:
- Հ. Եյդ օրը ի՞նչ օր էր կոչվում ։ Ռէից
մէջ :
- Պ. Գենտեկոստէ, այսինքն՝ յիսուն օր:
- Հ. Ռէից մէջ ի՞նչ տօն էր այդ:
- Պ. Տասն պատուիրանքներ տալու տօննէր,
զոր Վստուած տուաւ Մովսէս մար-
գարէին՝ Ախնա լեռան վերայ՝ Եղիպ-
տոսէն դուրս գալուց յիսներորդ օրը:
- Հ. Եռաքեալքն ի՞նչ տեղ էին սպասում
։ ողովն սրբոյ գալստեանը:
- Պ. Եյն վերնատան մէջ, ուր Յիսուս
աւադ հինգշարթի երեկոյին լուաց աշա-
կերտաց ոտները, և կատարեց հաղոր-
դութեան խորհուրդը. իսկ յարութե-
նէն յետոյ երեք անգամ երեկցաւ նո-
ցա այնտեղ :
- Հ. Քանի՞ անձինք կային վերնատան մէջ :
- Պ. Հարիւր քսան:
- Հ. Ի՞նչպէս եկաւ սուրբ ։ ողին:

- Պ. Գենտեկոստէի օրը յանկարծ եկաւ
երկնքէն սաստիկ քամու հնչեւն և
լցրեց տունը, որի մէջ նստած էին, և
նոցա երեկցան կրակի նման լեզուներ,
որք նստեցան իւրաքանչիւրոց վերայ,
և լցուեցան ։ ողովն Արքով, ու ըս-
կան խօսիլ զանազան լեզուներով :
- Հ. Եյդ դղրդոցի ձայնը լսող եղան:
- Պ. Եյն, Երուսաղէմի մէջ մեծ բազմու-
թիւն ժողոված լինելով Գենտեկոս-
տէի տօնին, մինչեւ անգամ և օտար
աղքերէն, լսեցին այն դղրդոցը, և ամե-
նեքեան վաղեցին զեպ ՚ի վերնատուն,
տեսնել թէ այս ի՞նչ է. և լսելով նո-
ցա խօսակցութիւնը՝ զարմանում էին:
- Հ. Եյդ ժամանակ ի՞նչ արին Եռա-
քեալք:
- Պ. Գետրոս կանգնեցաւ ոտին տասնումէկ
Եռաքելոց հետ, սկսաւ խօսիլ Վրիս-
տոսի Վստուածութեան վերայ, և ե-
րեք հաղար անձինք այն օրը հաւա-
տացին ԴՅՈՒԹԻՍ Վստուած, և այս-

պէս սկսաւ տարածուիլ Քրիստո-
նէութիւնը:

ԴԵՍ ԺԹ.

ԵԿԵՂԵՑԻ ՔՐԻՍՏՈՍԻ.

Հ. Օքնչէ է Եկեղեցին:

Պ. Եկեղեցին է բառ Յունական, և նշա-
նակէ Քրիստոսի հաւատացելոց ժողով
կամ ընկերութիւն:

Հ. Ովէ է զլուխ Եկեղեցւոյ:

Պ. Յիսուս Քրիստոս, որի հետ անքաժան
է մինչեւ աշխարհի վերջը:

Հ. Հաւատացեալքն ի՞նչ են կոչում:

Պ. Մարդին կամ անդամներ Քրիստոսի
նոյնալիս հօք :

Հ. Եկեղեցին քանի՞նշան կամ յատկու-
թիւն ունի:

Պ. Չորս, մի, սուրբ, ընդհանրական և
առաքելական:

Հ. Ընչու եմք ասում Մի:

Պ. Որովհեաև ամենայն քրիստոնեացք ու-
նին մէկ հաւատ ՚ի Յիսուս Քրիստոս,
մէկ յօյս փրկութեան, մէկ սիրյ շադ-
կալ, և մէկ զլուխ՝ որ է Քրիստոս:

Հ. Ի՞նչ պատճառաւ եմք կոչում Սուրբ:

Պ. Վասն զի Նորա զլուխն սուրբ է, և
իւր ալիւնը թափելով սրբեց Եկեղե-
ցին ամենայն մեղքերէն:

Հ. Ընդհանրական կամ Ամթողեկի ի՞նչ
ասել է:

Պ. Այն որ քրիստոնէական հաւատը տա-
րածուած է ընդհանուր աշխարհի ե-
րեսին:

Հ. Ի՞նչ է նշանակում Առաքելականը:

Պ. Այն՝ որ Քրիստոսի Եկեղեցին տա-
րածեցին Առաքեալք, և նոցա քարո-
զութեան վերաց է հիմնած:

ԳԱՅՈՒՄ

ԽՈՐՀԱՌԻՒԹԻՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Հ. Խորհուրդ ասելով ի՞նչ եմք իմաստում:

Պ. Խորհուրդ կ'նշանակի ծածկած կամ գաղանի բան, և այս անունը տալիս եմք Եկեղեցւոյ եօթն սրբազնի արտըղութեանց, որ արտաքուստ երկելի նշաններով կատարելով, ստանում է հաւատացեալը աներեւութապէս Աստուծոյ շնորհքը:

Հ. Քանի՞ են խորհուրդք Եկեղեցւոյ:

Պ. Եօթն.

1) Մկրտութիւն:

2) Դրոշմ:

3) Հաղորդութիւն:

4) Ապաշխարութիւն:

5) Զեռնաղբութիւն:

6) Պատկ կամ Ամուսնութիւն:

7) Օծումն հիւանդաց:

Հ. Քանի՞ խորհուրդ ընդունելու պարտական է ամենայն մարդ:

Պ. Չորս՝ մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն և ապաշխարութիւն. իսկ մնացած երեքն ձեռնաղբութիւն, պըսակ և վերջին օծումն՝ կախած է իւրաքանչեւրի կամքէն:

Հ. Ա՞ր խորհուրդք չեն կրկնուի:

Պ. Մկրտութիւն, դրոշմ և ձեռնաղբութիւն:

Հ. Ա՞վ է սահմանադիր խորհուրդների:

Պ. Մեր Տեր Յիսուս Քրիստոս:

ԳԱՅՈՒՄ

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ե Խ Ա Ն:

Հ. Օի՞նչ է Մկրտութիւն:

Պ. Մկրտութիւնն նշանակում է լրւացումըն, որ լուանալով երեխայի մարմինը աւազանի ջրի մջ, ներսելն սրբւում է նորա հոգին աղամացին կամ սկընական մեղքէն:

- Հ. Երեխայ բառը ի՞նչ կնշանակէ: Պ. Չմլրտած, թէ նորածին լինի և թէ հասակաւոր:
- Հ. Ի՞նչպէս եմք մլրտում: Պ. Քահանայն երեք անգամ աւազանի մէջ ընկղմերով զերեխայն յանուն ամենասուրբ Երրորդութեան, այսպէս է ասում միանդամ, "մլրտի Պետրոս ծառայս Աստուծոյ յանուն Ճօր և Որդւոյ և Ճողովոյն սրբոյ":
- Հ. Ի՞նչ օգուտ է ստանում մլրտեալն: Պ. Արբուելով սկզբնական մեղքէն՝ լինում է որդեզիր Ճօր Աստուծոյ, ժառանգակից Քրիստոսի և տաճար Ճողովյն սրբոյ:
- Հ. Ապիշտակ կտաւը ի՞նչ նշանակութիւն ունի: Պ. Ակզենական անմեղութեան:
- Հ. Իսկ վառած մոմերը: Պ. Ճաւատոյ լուսի և պայծառութեան:
- Հ. Կարօտն ի՞նչ է նշանակում: Պ. Պասկ, այսինքն է յաղթութեան նշան,

- որ յաղթելով անաստուածութեան՝ մտնում է Ճշմարիտ Աստուածածանութութեան մէջ: Հ. Իսկ համբուրելին: Պ. Պաշտպանութիւն և միաւորութիւն Քրիստոսի հետ:
- ԴԱՍ ԻՐ.
- Գ Ր Ո Շ Մ.
- Հ. Օ ի՞նչ է Դաշնութիւն: Պ. Դրոշմ կնշանակէ կնիք:
- Հ. Ե՞րբ է կատարւում այս խորհուրդը: Պ. Մկրտելուց յետոյ:
- Հ. Ի՞նչպէս եմք կատարում: Պ. Քահանայն սուրբ Մեռոնով օծում է մլրտեալի նշանաւոր անդամները, որք են՝ Ճակատ, ականջներ, աչքեր, քիթ, բերան, ձեռներ, սիրտ, թիկունք և ոտներ:
- Հ. Ի՞նչ պարգև է ստանում դրոշմելով: Պ. Պատահական անդամները կատարում են այս առաջնաշնորհը:

Պ. Մշկտեալն զբոշմի օծութեամբ ընդունում է Հողւցյն Արքյ պարզեները, զօրանում է և արիանում է հաւատքի մէջ, և լինում է զինուոր Քրիստոսի:

ԴԵՍ ԴՊ.

Ճ Ա Գ Ո Ւ Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն :

Հ. Ի՞նչ կնշանակէ Հաղորդութեան:
Պ. Միութիւն կամ մասնակցութիւն, որ ճաշակելով Քրիստոսի Մարմինը և Արիւնը, որոց նիւթն է Արքագործեալ Հաց և զինի, միանում ենք Քրիստոսի հետ հոգեով:

Հ. Հայն ի՞նչ տեսակ պիտի լինի:
Պ. Յորենի ալիւր, և անխմոր եփած, այսինքն է բաղարջ:
Հ. Հայն ի՞նչ եմք կոչում հասարակաց բառով:
Պ. Կշլար:

Հ. Գիրին ի՞նչ պիտի լինի:
Պ. Ինչ տեսակ որ լինի, թէ կարմիր և թէ սպիտակ, բայց առանց խառնելու նորա մէջ ջուր:
Հ. Ի՞նչպէս պէտք է հաղորդուիլ:
Պ. Կախապէս խոստովանելով քահանայի առջև մեր գործեալ մեղքելը, և պաշխարելով:
Հ. Ըստանց ապաշխարութեան կարելի՞ է հաղորդիլ:

Պ. Ո՛չ երբէք, վասն զի անարժանութեամբ հաղորդողն կրկին խաչում է զՔրիստոս, և իւր անձը դատապարտում է:

Հ. Ի՞նչ օգուտ կտանայ արժանաւորութեամբ հաղորդողն:
Պ. Կա կմանայ Քրիստոսի հետ, և Քրիստոս կրնակի նորա մէջ, և նա Քրիստոսի մէջ:

ԴԱՍ ԻԳ.

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Հ. Ի՞նչ է նշանակում Ապաշխարհական:

Պ. Ապա աշխարիլ, այսինքն յետոյ լաց-
լիլ:

Հ. Ո՞ր մեղքերն է թողում:

Պ. Այս, զօր գործել եմք մկրտութենէն
յետոյ:Հ. Ի՞նչպէս է կատարւում այդ խոր-
հուրդը:Պ. Վրիստոնեայն գնում է քահանայի
մօտ, ծունկ է չոքում նորա առջև,
խոստովանում է իւր ամենայն յան-
ցանքները, և յետոյ ապաշխարելով
իւր արածների վերայ՝ ընդունում է
Ճստուծոյ թողութիւն քահանայի
միջնորդութեամբ:

Հ. Իսկ եթէ ուղիղ չխոստովանի՞:

Պ. Օձապէտ քահանայն տայ թողութիւն,
բայց Աստուած չէ թողնելու:Հ. Ապաշխարութիւնն քանի՞ բան է պա-
հանջում:Պ. Երեք, սրտանց զյշումն, ուղիղ խոռ-
ագովանութիւն, և ճշմարիտ ապաշխա-
րութիւն:

ԴԱՍ ԻԵ.

Զ Ե Մ Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Հ. Ի՞նչ է նշանակում Ձեռնադրու-
թիւն:Պ. Կանակում է ձեռք գնել, որովհետեւ
այս խորհուրդը կատարւում է աղօթ-
քով և ձեռք գնելով նորընծայի գըլ-
խին:Հ. Ի՞նչպէս է կատարվում ձեռնադրու-
թեան գործողութիւնն:Պ. Կախապէս եւլիսկոպոսն քննում է
նորընծայի ուսումը, վարքն ուբարքը,
յետոյ նորընծայն ներկայանում է եկե-
ղեցուն, և ժողովուրդն ձայն է տալիս

- արժանիէ, ապա Եղիսկոպոսն ազօթե-
լով և ձեռք դնելով նորա գլխին՝ տա-
լիս է սրբազն աստիճանները:
- Հ. Ո՞րպիսի անձն պէտք է լինի քահա-
նայացուն:
- Պ. Ուսեալ Աստուածաշունչ սուրբ Գիր-
քը, Կրօնաղիտութիւն, Աստուածա-
բանութիւն, Եկեղեցական պատմու-
թիւն, բարոյականութեամբ առաքինի
և պարկեցու, և չպիտոյ է ունենալ
մարմնական արատութիւն կամ պա-
կասութիւն:
- Հ. Ո՞յք են քահանայ ընտրողները:
- Պ. Առաքելական սահմանադրութեամբ և
վաղեմի աւանդութեամբ է Եկեղեցա-
կանք և ժողովուրդը Եկեղեցւոյն, յո-
րոյ վերայ ունի ձեռնադրիլ:
- Հ. Եկեղեցական աստիճաններն մէկ բա-
ռով ի՞նչ են կոչւում:
- Պ. Քահանայապէտութիւն:
- Հ. Քանի՞ աստիճան ունի Քահանայա-
պէտութիւնն:

Պ. Ինն, որք են.

- 1) Դունապանութիւն:
 - 2) Դպրութիւն:
 - 3) Երդմնեցուցութիւն:
 - 4) Ջահընկալութիւն:
 - 5) Կիսասարկաւագութիւն:
 - 6) Սարկաւագութիւն:
 - 7) Վահանայութիւն:
 - 8) Եպիսկոպոսութիւն:
 - 9) Հայրապետութիւն, որ կոչի և
Կաթողիկոսութիւն կամ Պատրիար-
քութիւն:
- Հ. Քահանայն քանի՞ խորհուրդ է կա-
տարում:
- Պ. Աեց խորհուրդներ՝ բաց ՚ի ձեռնա-
դրութենէն:
- Հ. Քահանայն ի՞նչ իշխանութիւն ունի:
- Պ. Կապել և արձակել զմարդն մեղքե-
րէն:
- Հ. Քահանայի պարտականութիւնն ի՞նչ
է:
- Պ. Հովուել Քրիստոսի ժողովուրդը, մա-

տակարարել սուրբ խորհուրդները, ու
սուցանել Աստուածային բանը, և որ
մեծն է բարի գործերով օրինակ լինիլ
ժողովրդեան:

Հ. Եպիսկոպոսն ի՞նչ իշխանութիւն ունի:
Պ. Եպիսկոպոսն քաց 'ի քահանայի պաշ-
տոնը կատարելին՝ ունի իշխանու-
թիւն աստիճան տալու կղերիկոսաց և
քահանայ ձեռնադրելու, փրկչական և
սրբոց պատկերներ և խաչ, եկեղեցւոց
հիմքը, եկեղեցի, սեղանը և աւազանը
օրհնելու և օծելու:

Հ. Եպիսկոպոսը ո՞վ է ընտրում:
Պ. Այն վիճակի եկեղեցականք և ժողո-
վուրդն, ուր պակաս է Առաջնորդ:
Հ. Կաթողիկոսն ի՞նչ իշխանութիւն ու-
նի:
Պ. Բաց 'ի քահանայի և եպիսկոպոսի
պաշտօններ կատարելին՝ ունի իշխա-
նութիւն եպիսկոպոս ձեռնադրելու,
մեռն օրհնելու, կանոնական թղթեր
գրելու, Առաջնորդներ կարգելու:

Հ. Կաթողիկոսը ո՞վ է ընտրում:
Պ. Բողոք Հայ ազգը — Եպիսկոպոսնք և
ամենայն հոգևորականք և աշխարհա-
կանք:
Հ. Եպիսկոպոսի և քահանայի ո՞ր անդամ-
ներն են օծում:
Պ. Ճակատն ու ձեռները:
Հ. Իսկ Կաթողիկոսի՞նք:
Պ. Կորա գլխին թափում են մեռնը, ցու-
ցանելով թէ նա միայն է անհատ և
հոգևոր Պալուխ ազգի:

ԴԱՍ Ի.Օ.

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե.

Հ. Ի՞նչ է նշանակում Անուանութեան:
Պ. Նշանակում է ամու սահին, պատմին,
լուծը քաշող, օգնական:
Հ. Ամումութեան նպատակն ի՞նչ է:
Պ. Բազմանալ մարդկային ազգի, և հեռի
մաս մոլութենեն:
Հ. Ինչպէս է կատարելում այդ խորհուրդը:

Պ. Փեսայնու ու հարսն գնում են յեկեղեցին, և բազմութեան առջև յայտնում են իւրեանց փոխադարձ համաձայնութիւնը սիրելու և օգնելու միմեանց, և յետոյ քահանայն տալիս է հարսի ձեռքը փեսայի ձեռին, և աղօթելով նոցա վերայ՝ օրհնում է նոցապակը հրապարակաւ:

ԴԱՍ ԻՇ.

Ա Ե Բ Զ Ի Ն Օ Ֆ Ո Ւ Մ Ն.

- Հ. Օ լ ո ն չ է Ա ե ր ջ ի ն օ ժ ո ւ հ ն :
- Պ. Ա յ ն է որ հիւանդները օծում են օրհնեալ իւղով :
- Հ. Ի շ պ է ս է կատարւում :
- Պ. Վ ա հ ա ն ա յ ն գնում է հիւանդի տուն խաչով և աւետարանով, կարգում է աղօթք և օծում է օրհնեալ իւղով :
- Հ. Ի շ ն չ է նորա զօրութիւնը :
- Պ. Կ ե ր ե լ ս մեղքերը թողնում է, և զհա-

ւատով հիւանդը առողջացնում է:
 Հ. Կ ա ր ե լ ի ՞ է առանց իւղի կատարել :
 Պ. Ա յ ն, ինչպէս կատարում է ձայաստանեայց Եկեղեցին միայն աղօթքով, ունենալով հիւր Վ ր ի ս տ ո ս ի խօսքը՝ „ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բըժշկեցեն”:

ԴԱՍ ԻՇ.

ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒԽՏ ՔՐԻՍՏՈՆՅԻ

- Հ. Ի ՞ ն չ է նշանակում Վ ր ի ս տ ո ս ի ե ր կ ր ո ր դ գ ա լ ո ւ ս տ ը :
- Պ. Ա յ ն, որ Վ ր ի ս տ ո ս պիտի ե ր կ ր ո ր դ անգամ զայ Ա ս տ ո ւ ա ծ ա յ ի ն փառքով ու զօրութեամբ գատել թէ կենդանիքը և թէ մեռեալները :
- Հ. Ի ՞ ն չ զանազանութիւն կայ առաջին և ե ր կ ր ո ր դ գ ա լ ս տ ե ա ն մ ջ :
- Պ ե ծ զանազանութիւնն վասն զի առաջին գալուստն էր մեղաւորները փրկե-

Եռ, իսկ երկրորդումը՝ դատապարտելու զնուա:

Հ. Ե՞րբ պիտի զայ:

Պ. Ժամանակը մեզ չայտնի չէ, որովհետեւ Քրիստոս չայտնեց, բայց այսչափ գիտեմք, որ աշխարհի վերջին կլինի:

Հ. Ի՞նչ էր չայտնելու պատճառը:

Պ. Որ մեք պատրաստ լինիմք և միշտ բարի գործեմք:

ԴԱՍ ԻԹՅ.

ՑԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՌԵԼՈՅՑ:

Հ. Ի՞նչ կնշանակէ Յարութիւն մեռելոց:

Պ. Ե՞ն, թէ մեր հող դարձած մարմինները կրկին պիտի կենդանանան և միաւորին մեր հոգւոյ հետ:

Հ. Մեր մարմիններն որպիսի կլինին յարութեան ժամանակի:

Պ. Անապական և անմահ:

Հ. Կենդանի մնացածներն ի՞նչ կլինին:

Պ. Նոքա ևս յանկարծ կիոխուին յարուցեալներու նման:

ԴԱՍ Լ.

ՎԵՐՁԻԿ ԴԱՏԱՍՑԱՆ:

Հ. Ակըլջին դատաստանը ո՞վ կդատէ:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Մի օրինամիկ կլինի ամենքի վեճակն:

Պ. Ո՛չ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Դատաւորն կբաժանէ արդարները մեղաւորներէն, և ամենին իրանց գործերին համեմատ կտայ վարձ ու պատիժ, — կեանկը յաւիտենական և տանջանկ յաւիտենական:

Հ. Օի՞նչ է յաւիտենական կեանկը:

Պ. Է այն երջանիկ վեճակն, որի մջ արդարներն կվայելին հանդիսատ և ուրախութիւն, զոր ոչ մարդոյ աչք չէ տեսէլ և ոչ ականջն է լսել:

- Հ. Օքնչէ է տանջանք յաւիտենական:
- Պ. Ե այն ամենաթշուառ վիճակ, որի մէջ
մեղաւորներն զբկուած կլինին Աստու-
ծոյ տեսութենէն, արդարներու մաս-
նակցութենէն, և յաւիտեան կտանջ-
ուին անշեշ կրակով և անքրուն որ-
դունքով:

ԽԸ 1.Յ.

ՅՈՅՍ:

- Հ. Օքնչէ Յօյսն:
- Պ. Ե ակնկալութիւն ստանալու այն ա-
մենայն բարութիւնքը՝ զորս Աստուած
խոստացել է տալ մարդուն այն կեան-
քի մէջ :
- Հ. Ո՞ր է Աստուծոյ խոստումն:
- Պ. Յաւիտենական կեանք — երկնքի ար-
քայութիւն:
- Հ. Քրիստոս տուամ մեզ այդ յոյսը:
- Պ. Եյն, քանի որ աշխարհիս վերայ եր,

- քարոզելով յաւիտենական երանու-
թեան վերայ:
- Հ. Քանի՞ են աւետարանական երանու-
թիւնքն, և որոց խոստացաւ:
- Պ. Ինն, որը են,
- 1) Երանի հոգւով աղքատներուն, որ նոցա է երկնքի արքայութիւնն:
 - 2) Երանի սղաւորներուն, զի նոքա
կմիմիթարուին:
 - 3) Երանի հեղ մարդկանց, զի նոքա
կժառանգեն երկիրը:
 - 4) Երանի նոցա, որ քաղցած ու ծա-
րաւ են արդարութեան համար, զի նո-
քա պիտի կշտանան:
 - 5) Երանի ողորմածներուն, զի նոքա
կդաննեն ողորմութիւն:
 - 6) Երանի սրտով սուրբերուն, զի
նոքա զԱստուած կտեսնեն:
 - 7) Երանի խաղաղներուն, որ Աստու-
ծոյ որդիք կը կոչուին:
 - 8) Երանի հալածեալներուն արդա-

ըութեան համար, զի նոցա է երկնքի
արայութիւնն:

9) Երանի նոցա, երբ որ կսախատ-
ուին և կհալածուին, և սուտ կխօսին
նոցա վերայ ամենայն չար բան Քրիս-
տոսի համար, թող ուրախանան, փան
զի նոցա վարձն շատ է երկնքում,

(Սառ. Ե. 2—13):

ԴԱՅ Լ. Բ.

ԱԷՐ.

Հ. Օ. Բ. ն. է Աէրն:

Պ. Աէրն է հոգւոյ մի այնպիսի զգացումն,
որ զարթեցնում է մարդոյ միաքը սի-
րել զԱստուած, որպէս իւր Երարիչ
և Կախախնամող, և իւր ընկերը՝ ինչ-
պէս իւր անձը:

Հ. Ի. ն. բանի մէջ է կայանում սէրը:

Պ. Աստուծոյ կամքի կատարելու մէջ:

Հ. Օ. Բ. ն. են կամք Աստուծոյ:

Պ. Են սուրբ օրէնք Կորա:

Հ. Քանի՞ տեսակ են օրէնքներն:

Պ. Երկու՝ բնական և դրական, կամ ան-
դիր և զրաւոր:

Հ. Օ. Բ. ն. է բնական օրէնք:

Պ. Ե Խղճմանքն, զոր Աստուած սահ-
մանել է մարդոյ մէջ որպէս դատաւոր
չարն ու բարին որոշելու:

Հ. Ո՞ր է անդիր օրէնքն:

Պ. Ե յն, զոր Աստուած տուաւ Կահա-
պետաց մինչև Մովսէս:

Հ. Ո՞ր է զրական կամ զրաւոր օրէնք:

Պ. Ե յն ամենայն օրէնքներ, զորս տուաւ
Աստուած Նըկից ազգին Մովսէս մար-
դարէի ձեռքով:

Հ. Ո՞ր տուաւ:

Պ. Ախնա սարի վերայ, (որ յիսուն օրն էր
Եղիսակոսուն զուրս գալէն), և կոչ-
ում է Նին ուխափ օրէնք:

Հ. Քանի՞ է բաժաննում Նին օրէնքն:

Պ. Երեք, Եկեղեցական, Քաղաքական,
Բարոյական:

Հ. Օ. Բ' նչ է եկեղեցականն:

Պ. Են կանոններ, զոր Աստուած տուաւ Արէից եկեղեցւոյ արտաքին պրագործութեանց և արարողութեան համար, և պիտոյ էր տեել մինչև Քրիստոսի մարմանանալը:

Հ. Ո՞ր է Քաղաքականն:

Պ. Են ասհմանադրութիւննք Արէից քաղաքական և դատաստանական գործերի համար, և վերջացան Երուսաղեմի քանդուելով:

ԴՅՍ 1. Գ.

ՏԵՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ.

Հ. Ո՞ր է բարոյական օրէնք:

Պ. Տասն պատուիրանքն՝ զրած Աստուծոյ ձեռովլ երկու քարէ տախտակների վրայ:

Հ. Ասա տասն պատուիրանքը:

Պ. 1) Ես եմ Տէր Աստուած քո, բացի

ինձմին ուրիշ աստուածներ չունենաս:

2) Առողքեր չշինես, և ոչ երկրոպագութիւն տաս և ոչ պաշտես:

3) Կո Աստուծոյ անունը չժիշես ունայն բաների վերայ:

4) Ե արաթ օրը սուրբ պահես, և ոչինչ աշխարհական գործ չգործես, այլ նուիրես քո Տէր Աստուծոյն:

5) Պատուիր քո հայր ու մայրը, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս:

6) Մի սպանաներ:

7) Մի շնար:

8) Մի գողանար:

9) Առաջ վկայութիւն չտաս քո ընկերիդ համար:

10) Զցանկանաս քո ընկերի տանը, և ոչ նորա բոլոր կայքին:

Հ. Քանի՞ են բաժանվում պատուիրանքները:

Պ. Երկու Աստուածսիրութիւն և ընկերակիրութիւն:

- Հ. Աստուածսիրութեան օրէնքը քանի
են:
- Պ. Առաջին չորս յօդուածներն:
- Հ. Խսկ ընկերսիրութեմն:
- Պ. Ա երջին վեց յօդուածներն:
- Հ. Ընկերսիրութիւն ի՞նչ կնշանակէ:
- Պ. Սիրել զամենայն մարդ, որ ազգէ և
լինի, ինչպէս սիրում ենք զմեղ, ցան-
կանալ և առնել նոցա բարի, որչափ
մեր կարողութիւնը կտայ, որովհետե-
մէկ նախածնողներէն եմք առաջ եկած:
- Հ. Ո՞ր է զլուխ պատուիրանն:
- Պ. Աւր, վասն զի այն է զլուխ և լրումն
ամենայն օրէնքի:

ԴԵՍ 1.Դ.

ՆՈՐ ՈՒԽՏԻ ՕՐԷԿԱՔ.

- Հ. Զի՞նչ են օրէնք՝ Նոր ուխտի:
- Պ. Ե Աստուծոյ շնորհական խռստումն,
տուեալ Յիսուսի Քրիստոսի հաւա-

- տացեալներուն, որով կիրկուին և յա-
ւիտենական կեանք կժառանգեն:
- Հ. Ի՞նչ է պահանջում նոր ուխտի օրէն-
քըն:
- Պ. Ոիրել զԱստուած բոլոր անձնով, սրբ-
առվ և մաքով, և սիրել ընկերը՝ իր-
ըև մեր անձը:
- Հ. Ընկերսիրութեան համար Քրիստոս
ի՞նչ է պատուիրում:
- Պ. Սիրեցէք ձեր թշնամիքը, բարի արէք
ձեր ատելեաց, և աղօթք արէք նոցա
վերայ՝ որք զձեղ չարչարումն և հա-
լածումն:
- Հ. Քրիստոսի վերջին կտակն ի՞նչ էր:
- Պ. Քրիստոս մատնութեան զիշերին ա-
սաց Առաքելոց, “նորանով կճանաչեն
զձեղ՝ որ իմ աշակերտներ էք, եթէ
զմիմեանս կսիրէք, որպէս ես սիրեցի
զձեղ. վասնորոյ այս է իմ նոր պատ-
ուիրան, որ դուք զմիմեանս սիրէք:

ԴԱՍ 1.Ե.

ԱՆՕԹ.Ք.

Հ. Օ.ի՞նչ է Աղօթք:

Պ. Աղօթքն է մարի և սրտի բարձրանալ
առ Աստուած:

Հ. Քանի՞ կերպ կլինի աղօթքն:

Պ. Երկու, առանձին և հրապարակաւ:

Հ. Ո՞ր է առանձնականն:

Պ. Ե այն, երբ առանձին եմք աղօթում
մեր սրտի և տան մէջ :

Հ. Ո՞ր է հրապարակականն:

Պ. Ե այն, երբոր հաւատացելոց ընկերու-
թիւնն կատարում է եկեղեցում կամ
արտաքոյ նորա միաբանական Աստ-
ուածովաշտութիւն:

Հ. Ո՞ր է զլխաւոր աղօթքն:

Պ. Տէրունական կոչուածն:

Հ. Ասմ:

Պ. Հայր մեր որ յերկինս ես: Սուրբ եղի-
ցի անուն Քո, եկեսցէ արքալութիւն

Քո, եղեցին կամք Քո որպէս յերկինս
և յերկրի: Զհաց մեր հանապաղորդ
տնւր մեզ այսօր: Եւ թող մեզ զպար-
տիս մեր, որպէս և մեք թողումք մե-
րոց պարտապանաց: Եւ մի տանիք
զմեզ՝ ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի
չարէ: Զի քո է արքայութիւն և զո-
րութիւն և փառք յաւիտեանս:

ԴԱՍ 1.Օ.

Հ. Եկեղեցին մանելիս ի՞նչ պիտի ասեմք:

Պ. Մատից ՚ի տուն ՚Յո՛ և երկիրապազից ՚ի
տաճար սուրբ ՚Յո՛ երկիրազիւ ՚Յո՛:

Հ. Իսկ մտած ժամանակի:

Պ. ՚Ի մէջ տաճարիս և առաջի աստուած-
ընկայ և պայծառացեալ սուրբ նշա-
նացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ
երկիրազիւ երկիրապազանեմք, զառիր և
զհրաշալի և զյաղթող զակրութիւնդ
Քո օրհնենեմք և փառաւորեմք, և Քեզ
մատուցանեմք զօրհնութիւն և զփառս

Հօր և Որդւց և Հոգւոյդ որբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ԴԱՍ 1.Ե.

ԱՆՕԹՔ ԱՌԱԽՈՏԵԱՆ:

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով,
յնծացաք և ուրախ եղաք զամենայն աւու-
րըս կենաց մերոց:

Ուրախ եղաք վոխանակ աւուրցն՝ յորս
խոնարհ արարեր զմեղ, և ամացն՝ յորս տե-
սաք դչարչարանս:

Հայեա Տէր 'ի ծառայս Քո, և 'ի գոր-
ծըս ձեռաց Քոց, և առաջնորդեա որդւոց
նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ 'ի վե-
րայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա մեզ
Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա
մեզ:

Լուսովդ քո Վրիտառն ամենեքեան լու-
սաւորեցաք, և 'ի սուրբ Խոսչ Քո Փրկիչ

Հաւատացեալքս ապաւինեցաք : Լուր
մեզ Աստուծ Փրկիչ մեր, և արա առ
մեզ զղորմութիւն Քո մարդասէր:

ԴԱՍ 1.Ը.

ԱՆՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ:

Տէր Աստուծ մեր Դու պահեա զմեզ
խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յա-
մենայն ժամանակի: Բնդ սուրբ երկիւղ
քո բեկուեալ պահեա զմիաս և զեսորհուր-
դըս մեր: Որպէս զի յամենայն ժամ Քու
պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամ-
ւոյն: Եւ Քեզ հանցուք զօրհնութիւն
և զփառս Հօր և Որդւց և Հոգւոյդ սրբոյ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ԴԱՍ 1.Թ.

ԱՆՕԹՔ ԱՌ ԵՒՄՈՒ:

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն Տէր Յի-
սուս, յորժամ երեխս փառօք Հօր ընդ

ամսութեաւորս, յայնժամ մէք մի՛ ամառ
չեսցուք յուսացեալքս 'ի Քեզ, այլ զօ-
րութեամբ քով մեծաւ բերկրեսցուք ընդ
աջմէ Քրումմէ որպէս որդիս լուսոյ Առդիս
տունջեան:

Դ. Հ. Յանձն. հայր.

Գ. Ա. - 5 ԽՈՒ 1898

Կ. Ա. Յանձն. հայր.

Կ. Ա. Յանձն. հայր.

Կ. Ա. Յանձն. հայր.

Վնկանիմք առաջի քո սուրբ Վատուա-
ծածին, և աղաքեմք զանարատ զկոյսդ՝ բա-
րեխօսեան վասն անձանց մերոց. և աղա-
չեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ 'ի փոր-
ձութենէ և յամենայն վտանգից մերոց:



3345

3345

ՀՀ Ազգային գրադարան



NL0030259

3345

3242



3345

28(075)
U-25

ԱՇԱԽԻՉ

ՀԱՅԵԱՆԻՄԿԱՆ ԳԻՏԵԼԵՍՅ

ՀԱՅԱԿԱՆ

ԱՅԱՍԵՐԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՎԱՆԱՅ
Խ.

ՈՒՍՏԻՄՆԱՐԱՅՈՅ ՀԱՄԱՐ

ԹԵՂԱՎԱՐԱԿՐԵԱ

Սամեթի Առաջնորդության Մանուկյանց
Ուսուցիչ Կրօնագիտութեան և Եկեղեցական
պատմության հանդիպան Հռովեր և Աղջային
Տգիլայ:

5 125 1893

Ըստ

Օ—ԱՅ

Բ ՀՊԱՐԻ ՏՎ Ա ԿԱԹՈՒԿԻ ԷՀՄԻԱՄԻ
Ի ՎԱՂԱՐԺԱՊՈՅ

1631

ՏԱՐԱՏԻՒՔ

8189 ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻ
3956 ՎԻՃԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

28(075)

25 ՀԱՐՅՈՒԹ

ՀՕՅԱԿԱԾ

ԵԿԱ

- 5 ԽՈՆ 1898 -

ԴԱՎԻԴ ՇԻ. ՎԱՐԴԱՆ

Արմ. Բլագ. Օֆ.

ՀԱՅՈՒԹԱԾԱՅԱ ՀԱՄԱՐ



ՀԱՅՈՒԹԱԾԱՅԱ ՀԱՄԱՐ Առաջնային Պատուհան
Սպառական Վարչութեան Պատուհան 1922
Առաջնային Վարչութեան և Եկեղեցական
պատուհան Առաջնային Վարչութեան 1922

Դաստիարակութեան Վարչութեան Վարչութեան

ՀԱՅՈՒԹԱԾԱՅԱ ՀԱՄԱՐ

Հ. Հ.

1870 Առաջնային Վարչութեան Վարչութեան

010 ՏՊԱՐԱՆՆ. Վ. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԶՄԻԱՌՆԻ

Ի Վ. Ա. ԱՐԴԱՊԱՏ:

1/188

1/188

ՀՐԱՄԱՆԻ

Տ. Տ. ԳԵՐԳԻԵՎ Դ.
ՎԵՃԱՓ. ԵՒ ՄՐԱՋՆԵԳՈՅՆ ԿԱԹՈՎԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

2012



ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԿԵՆԵՐ. - ԳՐԱԴ. - ԸՆԹԱՐ.

Պ. Հ. Բագր. ընկեր.

- 5 ԽՈԽ 1898

ԿԱՍՏՐԱ-ՀԱՅՈՑ Արք. Ելեզ. Օպց.

- Հ. Ո՞ր հաւատո՞ն է ծշմարիտն ու մաքուլը:
- Գ. Քրիստոնէական հաւատը:
- Հ. Դու հաւատով ի՞նչ ես:
- Գ. Քրիստոնեայ:
- Հ. Ի՞նչ կնշանակէ Քրիստոնեայ անունը:
- Գ. Քրիստոսի հետեղող կամ հաւատացող:
- Հ. Ո՞վ դրաւ այդ անունը:
- Գ. Առաքեալը:
- Հ. Ո՞վ տեղ:
- Գ. Անտիոք քաղաքում Ակրիսյի, ուր

- աւելի շատանալով հաւատացելոյ թիւ-
ըր, ընկալան Քրիստոնեայ անունը:
- Հ. Ո՞վէ է Քրիստոնէական հաւատքը հի-
մըն :
- Պ. Մեր Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ :
- Հ. Ի՞նչպէս հիմնեց :
- Պ. Իւր քարոզութեամբ, չարչարանքով
և խաչի մահով :
- Հ. Ունեցած Քրիստոս իրան հետևողներ:
- Պ. Ե.յո, որոց մէջ զինաւորներն են տասն-
երկու Առաքեալք :
- Հ. Ո՞յք տարածեցին Քրիստոնէական հա-
ւատք :
- Պ. Գլխաւորապէս տառն և երկու Առաք-
եալք՝ Հոգւոյն Արբոյ առաջնորդու-
թեամբ :
- Հ. Քրիստոնէի առաջին նշանը ո՞րն է :
- Պ. Քրիստոսի փրկարան Խաչն, վասնորոյ
և խաչակիքում ենք մեր անձը :
- Հ. Խաչակիքեա տեսնեմ :
- Պ. Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն
Արբոյ: Ամէն :

- Հ. Քրիստոնէի վկանանն ու նպատակն
լունէ:
- Պ. Յաւիտենական երանութիւն :
- Հ. Շնչով կարելի է հասնել այն երանու-
թեան :
- Պ. Երբոր կունենանք դէպի Աստուած կա-
տարեալ Հաւատ, հաստատուն Յոյս,
և անկեղծաւոր Աէր :
- ԴԱՍ Բ.
- ՀԱՆԴԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ.
- Հ. Քրիստոնէական հաւատալիքն ո՞ր գրր-
քումն է գրուած :
- Պ. Հին և նոր Կտակարանի մէջ, զոր կո-
չումենք Աստուածաշունչ :
- Հ. Շնչով եմք կոչում Աստուածաշունչ :
- Պ. Պատճառ որ, Հոգւոյն Արբոյ ազգե-
ցութեամբ գրուեցաւ :
- Հ. Հին Կտակարանը ո՞ք գրեցին :
- Պ. Մարդարէք :

Հ. Խոկ նորը :

Պ. Առաքեալք :

Հ. Հաւատքի համառօտութիւնն ո՞ր տեղ
է դրուած :

Պ. Հանգանակի մէջ, որ է Հաւատքաձեք :

Հ. Ասա Հաւատամքը :

Պ. Հաւատամք 'ի մի Աստուած Հայր ա-
մենակալ, յարարիչն երկնի և երկրի,
երեւեաց և աներեւութից:

Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս,
յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստո-
ծոյ Ճօրէ միածին, այսինքն՝ յէութե-
նէ Ճօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի
լուսոյ, Աստուած Ճշմարիտ յԱստու-
ծոյ Ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արա-
րած:

“Նոյն ինքն 'ի բնութենէ Ճօր, որով
ամենայն ինչ եղեւ յերկնիս և 'ի վերայ
երկրի, երեւելիք և աներեւոյթք :

Որ յաղազս մեր մարդկան և փառն
մերոյ վրկութեան՝ իջեալ յերկնից՝
մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատա-

բելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն
Ճողւովն սրբով:

Որով էաո մարմին, հոգի և միտ, և
զամենայն որ ինչ է 'ի մարդ, Ճշմար-
տապէս՝ և ոչ կարծեօք :

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ,
յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ
յերկինս նովին մարմնով նստաւ ընդ
աջմ Ճօր :

Գալոց է նովին մարմնովն և փառօք
Ճօր 'ի դատել զկենդանիս և զմեռեա-
լըս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ
վախճան :

Հաւատամք և 'ի սուրբ Ճողին՝ յա-
նեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ
յօրէնս և 'ի մարդարէս և յաւետա-
րանս : Որ էջն 'ի Յորդանան, քա-
րոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի
սուրբան :

Հաւատամք և 'ի մի միայն ընդհան-
րական և առաքելական եկեղեցի. 'ի մի
միրտութիւն, յապաշխարութիւն, 'ի

քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց,
'ի յարութիւնն մեռելոց , 'ի դատաս-
տանն յաւիտենից հողւոց և մարմնոց,
յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն
յաւիտենականս :

Իսկ որք ասենն , էր երբեմն՝ յոր-
ժամ ոչ էր Որդի , կամ էր երբեմն՝
յորժամ ոչ էր սուրբ Հոգին , կամ
թէ յոչէից եղեն , կամ յայլէի էու-
թենէ ասեն լինել զՈրդին Աստու-
ծոյ՝ և կամ զՄուրբ Հոգին . և թէ
փոփոխելիք են կամ այլայլելիք , զայն-
պիսին նզովէ կաթողիկէ և առաքե-
լսկան սուրբ եկեղեցի :

Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
ռաջ քան զյաւիտեանս՝ երկիրպա-
գանելով սրբոյ Երրորդութեանն և
միոյ Աստուածութեանն Հօր և Որդոյ
և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից . ամի՞ն :

Հ. Ի՞նչ տեղ սահմանուեցաւ հանդա-
նակը :

Պ. Նիկիոյ ժողովում , ուր ժողոված էին
318 հայրապետք մեծ Առատանդիանու-
կայսեր հրաւերով :

Հ. Ե՞րբ եղաւ այն ժողովը :

Պ. 325 թուին Փրկչական :

Հ. Հանգանակն ով բերաւ ՚ի Հայաս-
տան :

Պ. Գրիգոր Լուսաւորչիկ պատիկ որդին
Երիստակիս Հայրապետ , որ մէկն էր
այն ժողովի անդամներէն :

Հ. Իսկ մեժ Քայուառաջեցուացուն ով ասաց :

Պ. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Վանի՞մ մասն է բաժանւում հանգա-
նակը :

Պ. Տասն երկու՝

Ա. Գոյութիւն Աստուծոյ :

Բ. Երրորդութիւն Աստուածային
անձանց :

Գ. Արաքազործութիւն և նախալս-
նամութիւն Աստուծոյ :

- Գ. Արքմանառութիւն Որդւոյն Եստուծոյ :
- Ե. Զարչարանք և Յարութիւն Քըրիստոսի :
- Զ. Համբարձումն Քրիստոսի :
- Է. Գալուստ Հոգւոյն սրբոյ:
- Ը. Եկեղեցի Քրիստոսի :
- Թ. Խորհուրդք Եկեղեցոյ :
- Ժ. Երկրորդ գալուստ Քրիստոսի:
- ԺԱ. Յարութիւն մեռելոյ :
- ԺԲ. Ա Երջին գատաստան:

ԴԱՍ Գ.

ԳԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՄԱՅՑ:

- Հ. Սատուած ասելով ի՞նչ եմք իմանում:
- Պ. Երիքի և երկի և նոցա մշջ եղած արարածների ստեղծող և նախախնամող :
- Տ. Բնչով ես հաստատում Սատուծոյ գոյութիւնը :

- Պ. Երբ որ ուշք ու մոքով կնայիմկը երկնային և երկրային արարածների վերայ և մեր անձին վերայ, և ուղեղ քննութեամբ կտեսնենք, որ այս մեծամարմին աշխարհը ինքն իրան չէր կարող դպյանալ առանց ճարտարապետի, ուրեմն մեկ ստեղծող կայ նորանց, և աշանա է Աստուած :
- Հ. Սատուած ո՞ր տեղ է:
- Պ. Օօրութեամբ ամեն տեղէ, բայց էութեամբ անբովանդակելի է:
- Հ. Սատուծոյ անունն ի՞նչ է:
- Պ. Սատուած անուն չունի, բայց տալիս եմք շատ անուններ՝ նորա գործերին համեմատ :
- Հ. Ո՞յք են այդ անունները:
- Պ. Երարիչ, Ատեղծող, Տէր, Տէր Աստուած, Տէր ամենակալ, Տէր զօրութեանց, Հայր, Թագաւոր, Դատաւոր, Դատաւոր, Եշան և այլն :

ԴԱՍ Գ.

ԵՐԻՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԺԱՅՑԻՆ ԱՆՁԵՆՑ.

- Հ. Աստուածային անձինք քանի՞ն են :
- Պ. Երեք, Հայր, Որդի և Հոգի սուրբ,
- Հ. Հայր՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Որդին՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Հոգին սուրբ՝ Աստուած է:
- Պ. Այս, Աստուած է:
- Հ. Ուրեմն երեք Աստուած են :
- Պ. Ոչ երեք, թէ պէտ երեք անձինք են,
բայց Աստուածութեամբ մի են, վասն-
որոյ և Աստուած մի է:
- Հ. Ի՞նչ զանազանութիւն կայ երրորդու-
թեան մէջ :
- Պ. Այս զանազանութիւնը, Հայր Աստ-
ուած՝ ոչ ծնունդ է և ոչ բղխումն,
այլ ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն
սրբոյ. Որդին՝ Աստուած՝ ոչ ծնող է

և ոչ բղխումն, այլ ծնունդ է օր՝ իշխ-
ափանից անմարմարար. Հոգին սուրբ՝
ոչ ծնող է և ոչ ծնունդ, այլ բղխումն
ի Հօրէ:

Հ. Ուրեմն ինչով կ'զանազանուին մի-
մանցմէն:

Պ. Ընձնաւորութեամբ. զի Հայրն չփ կաչ-
ուի Որդի կամ Հոգի, և ոչ Որդին՝
Հայր կամ Հոգի, և ոչ Հոգին սուրբ՝
Հայր կամ Որդի:

Հ. Բնութեամբ մի՞նչ թէ ոչ :

Պ. Ո՞հ է նոցա բնութիւնը, կամքը, զօ-
րութիւնը, արարչութիւնը, իշխանութ-
թիւնը և փառքը :

ԴԱՍ Ե.

ԱՃԽԱՐՃԻ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ
Ն Ա Խ Ա Խ Ն Ա Մ Ո Ւ Թ Ւ Ւ Կ Կ Կ:

Հ. Ո՞վ ստեղծեց աշխարհը:

Պ. Աստուած:

- Հ. Բնաշխ ստեղծեց:
- Պ. Ոչընչէ:
- Հ. Կոնչպիս ստեղծեց:
- Պ. Մէկ և ամենակարող խօսքով:
- Հ. Ստեղծելուց առաջ ի՞նչ դրուժեան
մէջ էր աշխարհը:
- Պ. Խաւար ու մութն էր, և անշխն, ջուրը
բռնած ունէր երկրի երեսը, և Աստու-
ծոյ հոգին ըրջում էր ջրերի վերայ:
- Հ. Ոչընչէ քանի՛ բան ստեղծեց:
- Պ. Ութն, երկինք, հող, օդ, հուր, ջուր,
հրեշտափներ, լրս, և մեր հոգիքը:
- Հ. Խսկ միւս երկրային արարածները ըն-
չէ՞ն ստեղծեց:
- Պ. Չորս տարերքէ՞ն՝ որը նիւթեր էին երկ-
րային արարածների:
- Հ. Խսկ երկնայի՞ն մարմինները:
- Պ. Առաջին օրուայ լուսէն, որ նոցա նիւ-
թըն էր:
- Հ. Վանի՞ օրում ստեղծեց:
- Պ. Ա եց օրում:
- Հ. Առաջին օրը ի՞նչ ստեղծեց:

- Պ. Լոյս, և սկսաւ զիշերն ու ցերեկը, և
Ժամանակի սկիզբն :
- Հ. Երկրորդ օրը ի՞նչ արաւ:
- Պ. Զրի մէկ մասրբարձրացրեց, այսինքն՝
ջուրը ջրից բաժանեց, շնորհով առակը
հաստատութիւն, զոր կոչում ենք եր-
կինք:
- Հ. Խսկ երրորդ օրը:
- Պ. Անացած ջրերը ժողովեց փոսերի մէջ,
և երեւցաւ ցամաքն, և երկիրը բղխեց
ծառեր, ծաղկիներ, խոտեղիններ և
բանջար. խսկ ջրերի ժողովը կոչեցաւ
ծով. և երեւցան լճեր, գետեր և աղ-
բիւրներ:
- Հ. Հինգերորդ օրը ի՞նչ ստեղծեց:
- Պ. Օդի թռչունները և ծովի ձկները:
- Հ. Խսկ վեցերորդ օրը:
- Պ. Յամաքային կենդանիքը, և յետոյ
մարդը:

ԳՅՈՒ Զ.

ՄԱՐԴ ՍՏԵՂԾԵԼԸ.— ԱՌԱՋԻՆ ԵԿԵՊԵՑԻ.

Հ. Աստուած ընչե՞ն ստեղծեց մարդը:

Պ. Հողին:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Ա երառաւ հողը և կազմեց մարդոց մարմինը, և տուաւ նորան բանական հողի:

Հ. Անունը ի՞նչ դրաւ:

Պ. Աղամ. որ կնշանակէ հողին առեղծուած:

Հ. Կինը ի՞նչ տեղին ստեղծեց:

Պ. Աղամի կողքէն, երբոր նա քնած էր, հանեց նորա կողքի ոսկորներէն մինը, և շինեց կին, ու տուաւ մարդուն օդնական, և անունը դրաւ Եւայ. որ կնշանակէ կեանք:

Հ. Այդ գործողութեամբ ի՞նչ հաստատեց Աստուած:

Պ. Ամուսնութեան սուրբ խորհուրդը:

Հ. Աղամ և Եւայ ի՞նչ տեղ էին բնակւ լում:

Պ. Դրախտում, զոր Աստուած ինքն տընկել էր:

Հ. Աշխարհի որ կողմն էր դրախտը:

Պ. Արևելեան կողմը, Հայաստան աշխարհում:

Հ. Բնով ես հաստատում:

Պ. Արովհեաւ Աստուածաշնչի մէջ զրած չորս գետերը բղխում են Հայոց աշխարհին. Տիգրիս և Եփրատ՝ մի և նոյն անուններով կան. իսկ Փիսովի և Գեհովի անունները փոխուած են և կոչվում են Արաքս և Շորիս:

Հ. Դրախտի մէջ զիխաւոր ծառերն ոչք էին:

Պ. Օառու կենաց և ծառ զիտութեան բարւոյ և չարի:

Հ. Ի՞նչ պատուիրանք տուաւ Աստուած նախաստեղծներուն:

Պ. Հրամայեց ուտել ամենայն ծառերի պտուղները, բայց զիտութեան բար-

- ւոյ և չարի ծառի պտուղը ասաց չու-
տել և մօտ չգնալ, որ չմեռնին:
- Հ. Առաջին եկեղեցին որ տեղ շնուրեցաւ:
- Պ. Դրախտումը, և բաղկացնում էին եր-
կու հոգի, — Եղամ ու Եւայ:
- Հ. Աստուծոյ և մարդոյ մէջ Ի՞նչ ուխտ
կամ պայման կար:
- Պ. Աստուծոյ կողմանէ էր անձակութիւնը,
և այս ուխտի նշանն էր վեհաց ծառը.
իսկ մարդոյ կողմանէ էր հնազանդու-
թիւն, որի նշանն էր՝ բարին ու լար գի-
տակալու ծառը: ՀՕԼՈՒՅ
- Հ. Պահեցի՞ն Եղամ ու Եւայ այդ պայ-
մանը:
- Պ. Ո՛չ. Վասն զի սատանան մանելով օձի
կերպարանք, խարեց զԵւայ, ասելով,
եթէ արդելած ծառի պտուղը ուտէք,
դուք ել Աստուծած կ'զառնաք: Հա-
ւատաց Եւայ օձի խօսքին, կերաւ
պտուղը, և Եղամին ևս ուտեցրեց,
և ընկան անհնաղանդութեան մեղքի
մէջ.

- Հ. Ի՞նչ առաջացաւ մեղքին:
- Պ. Ամօթ, երկիւղ, ողեմաշ աշխատանք,
հիւանդութիւն, և մահ:
- Հ. Մնացի՞ն Եղամ և Եւայ դրախտի մէջ:
- Պ. Ո՛չ. զի Աստուծած նոցա անհնաղան-
դութեան համար՝ արտաքսեց զնոսա
դրախտին ձգելով մահուան վճռի տակ:
- Հ. Տուան Աստուծած փրկութեան յոյս:
- Պ. Եյ՞. երբոր օձին անիծում էր, ասաց
Աստուծած, թէ կոչ գաւակը քո գլու-
խը կջաղջախէ:
- Հ. Ի՞նչ էր նշանակում այդ:
- Պ. Եյն, թէ Աստուծոյ Որդին պիտի մար-
մին առնու կնոջէն, և սատանային յաղ-
թէ, ու Եղամի որդիքը ազատէ:
- Հ. Ի՞նչ է կոչւում առաջին մեղքը:
- Պ. Եղամային կամ սկզբնական մեղք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԽԱՐԱԾԱԿԱՆ ԲՈՂՈՔՈՒԹՅՈՒՆ
7/1. 1922 թ. ԽԱՅԱԾԱԿԱՆ ՓՐԵԴԱԿԱՆ ԱԽԱՐԱԾԱԿԱՆ ԲՈՂՈՔՈՒԹՅՈՒՆ

ԴԵՍ Բ.

ՄԱՐՄՆԱԾՈՒԹԻՒՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅՑ.

- Հ. Որդին Աստուծոյ երբ առաւ մարմին։
 Պ. 5199 տարի անցնելով աշխարհի ստեղծելու օրին։
 Հ. Ումե՞ն առաւ մարմին։
 Պ. Մարիամ սուրբ կուսէն, որ Դաւիթ մարդարէի և թագաւորի ցեղէն էր։
 Հ. Ի՞նչպէս առաւ։
 Պ. Աստուծոյ հրամանով Գաարիել հրեշտակը գնաց Կազարէթ քաղաքը, և աւետիս տուաւ սուրբ կոյս Մարիամին, թէ քեղմէն պիտի ծնուի աշխարհի Փրկիչը — Աստուծոյ Որդին. և սուրբ Կոյսն յղացաւ Հոգւով սրբով։
 Հ. Ուր ծնաւ Քրիստոս։
 Պ. Շեղզէմ քաղաքում մնուրի մէջ։
 Հ. Դմացուեցաւ նորա ծնունդը։
 Պ. Եյ՞ որովհետեւ նորա ծննդեան զիշերին հրեշտակները յայտնեցին Հո-

վեներուն, և մէկ անսովոր և մեծ աստղ երևեցաւ արեւելքում, զոր երեք մագեր տեսնելով՝ իմացան և եկան երկրապատճիւն տալ Քրիստոսին։
 Հ. Ո՞վ եր Երուսաղէմի թագաւորը։
 Պ. Հերովդէս մեծ։
 Հ. Կա երբոր իմացաւ այդ ի՞նչ արաւ։
 Պ. Վախենալով՝ թէ չզվկուի թագաւորութենան, սպանել տուաւ Շեղզէհի երեխայքը, երկու տարեկաննեն ցած, որպէս զի նոցա հետ սպանուի և Քրիստոս։

- Հ. Ի՞նչպէս աղասուեցաւ Քրիստոս։
 Պ. Հրեշտակի հրամանով հայր Յովսէփը փախցրեց զնա և մայրը Ճնգիպոս, և երբոր մեռաւ Հերովդէս, կրկին յետ դարձան Գալիլեայի Կազարէթ քաղքը։

ԳԵՍ ՁԱ.

ԵՒՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

Հ. Յիսուս ի՞նչ էր կոչում ծնուելուց
առաջ:

Պ. Բան Հօր, Միածին, Որդի Աստուծոյ:

Հ. Խոկ ծնուելուց յետոյ:

Պ. Յիսուս, Քրիստոս, Մեսիա, Էմմա-
նուէլ:

Հ. Ի՞նչ է նշանակում Յիսուս անունը:

Պ. Յիսուս՝ Երրայեցւոց բառէ, և կընշա-
նալի Փրկէլ:

Հ. Ի՞նչ պատճառաւ ստացաւ այդ ա-
նունը:

Պ. Որովհետեւ նա պիտի փրկէր մարդկային
ազգը սատանայի գերութենէն և յա-
ւիտենական գատապարտութենէն:

Հ. Ի՞նչ է նշանակում Քրիստոս և Մեսիա:

Պ. Քրիստոս անունը Յունարէնէ, և Մե-
սիա Հրէարէն, և կնշանակեն Օծէալ:

Հ. Բնոր եմք ասում Օծեալ:

Պ. Որովհետեւ նա օծեալ էր սուրբ Հոգ-
ով, և այս օծումով եղաւ Քահա-
նայապետ, Թագաւոր յաւիտենական,
Մարդարէ և բարձր քան զմարդարէ-
քը:

ԳԵՍ ՁԱ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հ. Ո՞ւր մկրտեցաւ Քրիստոս:

Պ. Յորդանան գետում:

Հ. Կանի՞ տարեկան էր:

Պ. Երեսուն:

Հ. Ո՞ւ մկրտեց:

Պ. Օսքարիս քահանայի որդին Յով-
հանինէս:

Հ. Ի՞նչ հրաշք եղաւ մկրտութեան ժա-
մանակ:

Պ. Երկինքը բացուեցաւ, և Հայրն Աստ-
ուած ձայն տուաւ “Դա է իմ սիրելի
Որդին, որին ես հածեցայ”. և Հոգին

սուրբ աղանու նման իջաւ Գրիստո-
սի վերայ:

- Հ. Ի՞նչ էր նշանակում այդ հրաշքը:
 Պ. Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւ-
 նը, թէ նա է կատարեալ Աստուած և
 կատարեալ մարդ, և թէ նա է Փրկիչ
 աշխարհի:

ԴԵՍ ԺԱ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ.

- Հ. Եւետարանն ի՞նչպէս է նկարագրում
 Քրիստոսի երկրացին կեանքը:

- Պ. Թէ Քրիստոս քարեց իւր կեանքը խո-
 նարհութեամբ և աղքատութեամբ:

1) Կառագութիւն շնչում Երուսալէ-
 մի քաղաքները քարոզութիւն անելու:

2) Չունէր հաստատ բնակարան, այլ
 ինչ տեղ մընում էր՝ այն տեղ էր կե-
 նում, թէ շնութեանց մէջ, թէ անա-
 պատներում և թէ լեռներում:

3) Խղճում էր հիւանդներուն և մե-
 ղաւորներուն՝ ամենքի վերայ ունէր
 դութ, և չէր զգում մեղաւորներու
 հետ հաց ուտելու:

4) Կա գնում էր հրաւերներում,
 ինչպէս Կանա Գալիլեացւոց հարա-
 նիքը, և Պատթեսու մաքսաւորի և
 Ամմն բորոտի տները:

5) Անխափան քարոզում էր հրա-
 պարախներում, տներում, լեռների
 վերայ, անասպատում և ծովի վերայ.
 Խոկ շարաթ օրերը գնում էր ձըեկց
 ժողովարանը, և մեկնում էր զբքերը:

6) Չունէր հանգստառթիւն ժողո-
 վորդի ձեռքէն, որք օր ու գիշեր նորա
 չորս կողմը պատած էին, մինչև որ շատ
 անդամ հաց չէր կարողանում ուտել:

7) Ուսուցանում էր իշխանութեամբ,
 և ոչ որպէս ձըեկց բարունիքն և կար-
 դացողներն:

8) Առանց կեղծաւորութեան նա-
 խատում էր Փարիսեցիները և Դպիր-

ները և օրէնսդրէաները, և այս պատճառաւ նոքա չէին սիրում զ՞իրիստոս:

9) Ճաղողվրդի հետ խօսում էր իւր աշակերտաց:

10) Երկայնամոռութեամբ համբերում էր աշակերտաց տիմարութեան, տղիսոութեան և փառասիրութեան, և ուրիշ պակասութեանց, և խրատում էր զնոսա:

11) Ամենեին չծիծաղեցաւ, և ոչ թէ մէկին կամ միւսին տիսուր դէմք ցոյց տուաւ, նորա դէմքը պայծառ էր և ուրախ:

12) Պարապ ժամանակ, մանաւանդ գիշերով միշտ աղօթում էր արտասուք թափելով:

13) Ամենայն գործողութեանց մէջ էր համեստ և պարկեցաւ, և հայելի ամենայն առաքինութեանց:

14) Համբերում էր փարիսեցիներու և կարդացողներու անարդանկներին,

որ կոչում էին գնա ուտող, արբեցող, զիւահար, բարեկամ մեղաւորներու և մաքսաւորներու:

15) Դրաւ այնպիսի օրէնքներ, ողբյալիստեան համեմատ են ժամանակի հանգամանքներին, և մարդոյ բարոյական և կրօնական կեանքին:

16) Վատում էր աշխարհի փառքը, վայելչութիւնը և մեծութիւնը, և ամենեցուն այն էր քարոզում, մանաւանդ իւր աշակերտաց:

17) Աիրում էր ձրեից ազգը և Երրուսաղէմ քաղաքը, և լաց էր լինում նորա վրայ, տեսնելով նորա ներկայ և ապագայ թշուառութիւնքը, որոց ներքոյ ընկել էր:

ԳԱՍ ԺԲ.

Հ. Ե՞նչ հրաշքներ արտւ Շիրիստոս:

Պ. Ջուրը զինի փոխեց, կոյրերը լուսաւորեց, խերուն լսել տուաւ, համբնե-

բուն խօսիլ, կադերուն գնալ, հիւանդաները և անդամալցները առողջացրեց, մեռեներուն յարութիւն տուաւ, դիւահաները բժշկեց, սակաւ հացով հազարաւոր մարդիկ կերակրեց, ծովի վերայ գնաց, ինչպէս ցամաքի վերայ, հողմերուն սասաեց և ծովի ալիքները դադարեցրեց:

ԴԱՍ ԺԳՆ.

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՒԹԻՒՆ:

Հ. Ո՞վ էր Կրիստոսի մատնողն:

Պ. Յուղոյ Խակարիովտացի, որ Կրիստոսի տասներկու առաքեալներէն մէկն էր:

Հ. Ո՞վքան արծաթ առաւ:

Պ. Երեսուն:

Հ. Յետոյ ի՞նչ արաւ Յուղա:

Պ. Վեր առաւ իւր հետ ձրեից ամբոխը և ձառնական զինուորներ զինքերով, և եկաւ այն պարտէզը, ուր ազօթում էր Յիսուս, և բռնեցին դնա:

Պ. Յուղա ի՞նչ նշան էր տուել ձրեից:
 Պ. Ձամբոյր, թէ ուժ եւ համբուրեմ, զնա բռնեցէք:
 Հ. Օզջանց նա իւր մեղքը:
 Պ. Եյս, տարաւ արծաթը, և գարձրեց քահանայապետներուն և ծերերուն ու մեղաց գոչեց. բայց նոքա չստացան փողը, և նա յուսահատած զնաց ու խեղդուեցաւ:

ԴԱՍ ԺՊ.

ՀԱՐՑԱՐԱՆՔ ԵՒ ՄԱՀ ՔՐԻՍՏՈՒԹԻՒՆ:

Հ. Ո՞վ տարան ձրեայք դՅիսուս:

Պ. Աննա և Կայիսարայ քահանայապետներու մօտ:

Հ. Է՞նչ անցք անցուցին Յիսուսի հետ:

Պ. Ո՛չ զիշերը պահեցին ու շատ չարչարեցին, երեսին թքելով, ապտակելով, ծիծաղելով և ծաղը առնելով:

Պ. Առաւոտուն ո՞ւր տարան:

- Պ. Պիղատոս Պնդացու մօտ, որ ձռո-
մայեցիներէն կարգած էր ձրէաստանի
դատաւոր:
- Հ. Պիղատոս ի՞նչ արաւ:
- Պ. Ես տեսնելով՝ Նորա անմեղութիւնը՝
շատ աշխատեց ազատել, բայց հնար
չեղաւ. վասնորոյ առաւ ջուր և ըռաց
ձեռները ասելով՝ "Ես անպարտ եմ
այդ արդարի արիւնէն":
- Հ. ձրէայք ի՞նչ պատասխանեցին:
- Պ. Դորա արիւնը մեր վերայ և մեր որդ.
ւոց վերայ:
- Հ. Ի՞նչ վճռեց Պիղատոս:
- Պ. Քըլիստոս զլիին դրաւ փուշ պսակ,
և վճռեց խաչել զնա. ուստի և մատ-
նեց ձրէից ձեռքը:
- Հ. Ո՞ւր խաչեցին զՅիսուս:
- Պ. Գողգոթայ լեռան վերայ, Խրուսաղե-
մի մօտ:
- Հ. Երա հետ ուրիշներ էլ խաչեցի՞ն:
- Պ. Եյո, երկու աւազակներ. բայց աջա-
կողմեանը զղջալով իւր մեղքը, ար-

- քայութեան արժանացաւ:
- Հ. Խաչի վերայ ի՞նչ էր զրած:
- Պ. Պիղատոս մէկ տախտակի վերայ զրեց
այս բանը, "Յիսուս Նաղովըցի Ձա-
դաւոր ձրէից". և մեխել տուաւ խա-
չի զլիին:
- Հ. Ի՞նչ խմեցրին խաչի վերայ:
- Պ. Յիսուս ջուր ուզեց, բայց նորա փո-
խանակ տուին քացախ խառնած լեզու
հետ:
- Հ. Յիսուս ի՞նչպէս աւանդեց մարդկային
հոգին:
- Պ. Եղաղակեց բարձր ձայնով դէպի ձայրն
Եստուած՝ "Ճայր, Կո ձեռքդ եմ
աւանդում իմ հոգիս":
- Հ. Ի՞նչ է նշանակում բարձրածայն աղա-
ղակելը:
- Պ. Եյն, թէ իշխանաբար է մեռնում, և
ինքն է իշխան մահու, և ոչ թէ մահը
նորան:
- Հ. Քանի՞նշաններ եղան Խաչելութեան
ժամանակ:

Պ. Ա. Եց. 1) արեգակն խառարեցաւ, յետոյ երբոր հոգին աւանդեց, 2) երկիրը շարժեցաւ, 3) քարերը պատառեցան, 4) զերեղմանները բայցուեցան և սրբոց մարմինները յարութիւն առան, 5) տաճարի վարագոյրը պատառեցաւ, 6) կողքեց բղենեց արիւն և ջուր:

Հ. Ի՞նչ էին նշանակում այդ հրաշքները:

Պ. Թէ խաջուածն Քրիստոս ոչ միայն մարդ էր, այլ և Աստուած էր, որ չարչարեցաւ և մեռաւ միայն մարմնով, և կենդանի էր Աստուածութեամբ, որ անբաժան էր նորա մարդկային բնութենէն:

Հ. Քրիստոսի կողքէն բղենած արիւն ու ջուրը ի՞նչ նշանակութիւն ունեին:

Պ. Թուրը օրինակ էր աւազանի մլրտութեան, իսկ արիւնը՝ հաղորդութեան խորհրդին:

Հ. Բանական հոգին ուր զնաց:

Պ. Բանական հոգին անբաժանելի Աստ-

ուածութեամբ իջաւ դժոխքը, և ազատեց նահապետաց, մարգարեից և արդարոց հոգիքը, որք սպասում էին նորա այնաեղ գնալուն:

ԴԱՍ ԺԵ.

ԹԱՂԱԽՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հ. Ո՞ր օր թաղեցին զՅիսուս:

Պ. Ուրբաթ օրը, երեկոյեան ժամին, որ է մահուան օրը:

Հ. Ո՞յք իջուցին նորա մարմինը խաչէն:

Պ. Յովսէփ Արեմաթային և “Սիկոյիմոս” Արէից իշխաններն, որք ծածուկ աշակերաններն էին Յիսուսի:

Հ. Ո՞ր թաղեցին:

Պ. Գողղոթայի մօտիկ մէկ սպարաֆղում, որի մէջ կար քարէն փորած գերեզման:

Հ. Թաղելուց յետոյ ի՞նչ պատահեցաւ:

Պ. Նըմայք խնդրեցին Գիղատոսէն զօրականներ գերեզմանին զգուշանալու համար, և գերեզմանի քարէ խուփն էլ կնքեցին:

Հ. Ընչո՞ւ կնքեցին:

Պ. Յիշելով Քրիստոսի բանը, թէ երեք օրէն յետոյ յարութիւն պիտի առնում, կարծեցին թէ աշակերտները կդողանան մարմինը, և կասեն թէ յարեաւ:

ԻԱՍՈ Ժ.Օ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հ. Ե՞րբ յարեաւ Քրիստոս:

Պ. Երբորդ օրը մահէն յետոյ, այսինքն՝ շարաթ երեկոյին դէպի ի կիւրակէ:

Հ. Ի՞նչ պատահեցաւ յարութեան ժամանակ:

Պ. Նըմայք Աստուծոյ իջանելով երկրներէն լուսաւոր տեսիլքով, զլորեց գե-

րեզմանի քարը, և նստաւ նորա վերայ: Հ. Գաերեզմանի պահապաններուն ի՞նչ պատահեցաւ:

Պ. Ահ ու դողը բռնեց զնոսա, և ընկան երեսի վերայ զեանին, ինչպէս մեռեալ:

Հ. Քրիստոսի յարութեան համբաւը տարածուեցաւ:

Պ. Այսո, որովհետեւ պահապաններէն միքանիսը զնացին, պատմեցին քահանայապետներուն ամենայն անցքը:

Հ. Ի՞նչ կարգադրութիւն արին քահանայապետներն:

Պ. Խորհուրդ արին ժողովրդեան ծերերու հետ, շատ փող տուին պահապաններուն, և խրատեցին ասել, թէ մերքնած ժամանակ աշակերտներն եկան ու դողացան Յիսուսի մարմինը:

Հ. Ո՞յք տեսան զՅիսուս յարութենէն յետոյ:

Պ. Մարիամ Մագդաղենացին և միւս իւղաբեր կանայք, աշակերտներն և ուրիշ շատերն, որոց թիւը Պօղոս առա-

ՔԵԱԼ դնում է աւելի քան զհինդ հա-
րիւր:

ԴԱՍ ԺԷ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Հ. Ե՞ր համբարձաւ Քրիստոս:

Պ. Քառասուն օրուայ յարութենէն յե-
տոյ:

Հ. Ո՞ր տեղէն համբարձաւ:

Պ. Զիթենեաց լեռան գլխէն, որ մօտ էր
Երուսաղէմին և Ռեթանիային:

Հ. Ո՞յք կային նորա մօտ:

Պ. Իւր աշակերտները և միւս հաւատա-
ցեալք:

Հ. Ի՞նչ խոստացաւ Յիսուս աշակերտաց:

Պ. Խոստացաւ ուղարկել զողին Առորք,
որ միիթարէ և զօրացնէ զնոսա:

Հ. Ի՞նչպէս եղաւ համբարձումն:

Պ. Յիսուս տարաւ աշակերտները Զիթե-
նեաց լեռան գլուխը, և բարձրացնելով

ձեռները օրհնեց զնոսա, տալով զանա-
զան պատուերներ, և ինքն ազամային
մարմնով համբարձաւ դէպ ՚ի երկին-
քը, իսկ աշակերտները և հաւատացե-
լոց բազմութիւնը պէլացած վերև էին
նայում, բայց Յիսուս զնալով ամպե-
րի մջ, այլ ևս չունենուեցաւ. վասն-
որոյ ամենեքեան յետ դարձան յԱրու-
սաղէմ, և սպասում էին նորա խոստ-
մունքի կատարելուն:

Հ. Եյժմ ո՞ւր է Յիսուս Քրիստոս:

Պ. Իւր համբարձման օրէն նստած է Հօր
Սստուծոյ աջ կողմը, Սստուածային
յաւիտենական փառքի մջ, զոր ունէր
աշխարհի ստեղծելուց առաջ:

ԴԱՍ ԺԲ.

ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԴԱԼՈՒՍԾԸ.

Հ. Ե՞ր կատարեցաւ Քրիստոսի խոս-
տումն:

- Պ. Նորա համբարձման տասներորդ օրը,
որ յարութիւն առնելու օրէն կանէ
յիսուն օր:
- Հ. Եյդ օրը ի՞նչ օր էր կոչվում ։ Ռէից
մէջ :
- Պ. Գենտեկոստէ, այսինքն՝ յիսուն օր:
- Հ. Ռէից մէջ ի՞նչ տօն էր այդ:
- Պ. Տասն պատուիրանքներ տալու տօննէր,
զոր Վստուած տուաւ Մովսէս մար-
գարէին՝ Ախնա լեռան վերայ՝ Եղիպ-
տոսէն դուրս գալուց յիսներորդ օրը:
- Հ. Եռաքեալքն ի՞նչ տեղ էին սպասում
։ ողովն սրբոյ գալստեանը:
- Պ. Եյն վերնատան մէջ, ուր Յիսուս
աւադ հինգշարթի երեկոյին լուաց աշա-
կերտաց ոտները, և կատարեց հաղոր-
դութեան խորհուրդը. իսկ յարութե-
նէն յետոյ երեք անգամ երեկցաւ նո-
ցա այնտեղ :
- Հ. Քանի՞ անձինք կային վերնատան մէջ :
- Պ. Հարիւր քսան:
- Հ. Ի՞նչպէս եկաւ սուրբ ։ ողին:

- Պ. Գենտեկոստէի օրը յանկարծ եկաւ
երկնքէն սաստիկ քամու հնչեւն և
լցրեց տունը, որի մէջ նստած էին, և
նոցա երեկցան կրակի նման լեզուներ,
որք նստեցան իւրաքանչիւրոց վերայ,
և լցուեցան ։ ողովն Արքով, ու ըս-
կան խօսիլ զանազան լեզուներով :
- Հ. Եյդ դղրդոցի ձայնը լսող եղան:
- Պ. Եյն, Երուսաղէմի մէջ մեծ բազմու-
թիւն ժողոված լինելով Գենտեկոս-
տէի տօնին, մինչեւ անգամ և օտար
աղքերէն, լսեցին այն դղրդոցը, և ամե-
նեքեան վաղեցին զեպ ՚ի վերնատուն,
տեսնել թէ այս ի՞նչ է. և լսելով նո-
ցա խօսակցութիւնը՝ զարմանում էին:
- Հ. Եյդ ժամանակ ի՞նչ արին Եռա-
քեալք:
- Պ. Գետրոս կանգնեցաւ ոտին տասնումէկ
Եռաքելոց հետ, սկսաւ խօսիլ Վրիս-
տոսի Վստուածութեան վերայ, և ե-
րեք հաղար անձինք այն օրը հաւա-
տացին ԴՅՈՒԹԻՍ Վստուած, և այս-

պէս սկսաւ տարածուիլ Քրիստո-
նէութիւնը:

ԴԵՍ ԺԹ.

ԵԿԵՂԵՑԻ ՔՐԻՍՏՈՍԻ.

Հ. Օքնչէ է Եկեղեցին:

Պ. Եկեղեցին է բառ Յունական, և նշա-
նակէ Քրիստոսի հաւատացելոց ժողով
կամ ընկերութիւն:

Հ. Ովէ է զլուխ Եկեղեցւոյ:

Պ. Յիսուս Քրիստոս, որի հետ անքաժան
է մինչեւ աշխարհի վերջը:

Հ. Հաւատացեալքն ի՞նչ են կոչում:

Պ. Մարդին կամ անդամներ Քրիստոսի
նոյնալիս հօք :

Հ. Եկեղեցին քանի՞նշան կամ յատկու-
թիւն ունի:

Պ. Չորս, մի, սուրբ, ընդհանրական և
առաքելական:

Հ. Ընչու եմք ասում Մի:

Պ. Որովհեաև ամենայն քրիստոնեացք ու-
նին մէկ հաւատ ՚ի Յիսուս Քրիստոս,
մէկ յօյս փրկութեան, մէկ սիրյ շադ-
կալ, և մէկ զլուխ՝ որ է Քրիստոս:

Հ. Ի՞նչ պատճառաւ եմք կոչում Սուրբ:

Պ. Ա ան զի Նորա զլուխն սուրբ է, և
իւր ալիւնը թափելով սրբեց Եկեղե-
ցին ամենայն մեղքերէն:

Հ. Ընդհանրական կամ Ամթողեկի ի՞նչ
ասել է:

Պ. Այն որ քրիստոնէական հաւատը տա-
րածուած է ընդհանուր աշխարհի ե-
րեսին:

Հ. Ի՞նչ է նշանակում Առաքելականը:

Պ. Այն՝ որ Քրիստոսի Եկեղեցին տա-
րածեցին Առաքեալք, և նոցա քարո-
զութեան վերաց է հիմնած:

ԳԱՅՈՒՄ

ԽՈՐՀԱՌԻՒԹԻՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Հ. Խորհուրդ ասելով ի՞նչ եմք իմաստում:

Պ. Խորհուրդ կ'նշանակի ծածկած կամ գաղանի բան, և այս անունը տալիս եմք Եկեղեցւոյ եօթն սրբազնի արտըղութեանց, որ արտաքուստ երկելի նշաններով կատարելով, ստանում է հաւատացեալը աներեւութապէս Աստուծոյ շնորհքը:

Հ. Քանի՞ են խորհուրդք Եկեղեցւոյ:

Պ. Եօթն.

1) Մկրտութիւն:

2) Դրոշմ:

3) Հաղորդութիւն:

4) Ապաշխարութիւն:

5) Զեռնաղբութիւն:

6) Պատկ կամ Ամուսնութիւն:

7) Օծումն հիւանդաց:

Հ. Քանի՞ խորհուրդ ընդունելու պարտական է ամենայն մարդ:

Պ. Չորս՝ մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն և ապաշխարութիւն. իսկ մնացած երեքն ձեռնաղբութիւն, պըսակ և վերջին օծումն՝ կախած է իւրաքանչեւրի կամքէն:

Հ. Ա՞ր խորհուրդք չեն կրկնուի:

Պ. Մկրտութիւն, դրոշմ և ձեռնաղբութիւն:

Հ. Ա՞վ է սահմանադիր խորհուրդների:

Պ. Մեր Տեր Յիսուս Քրիստոս:

ԳԱՅՈՒՄ

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ե Խ Ա Յ

Հ. Օի՞նչ է Մկրտութիւն:

Պ. Մկրտութիւնն նշանակում է լրւացումըն, որ լուանալով երեխայի մարմինը աւազանի ջրի մջ, ներսելն սրբւում է նորա հոգին աղամացին կամ սկընական մեղքէն:

- Հ. Երեխայ բառը ի՞նչ կնշանակէ: Պ. Չմլրտած, թէ նորածին լինի և թէ հասակաւոր:
- Հ. Ի՞նչպէս եմք մլրտում: Պ. Քահանայն երեք անգամ աւազանի մէջ ընկղմերով զերեխայն յանուն ամենասուրբ Երրորդութեան, այսպէս է ասում միանդամ, "մլրտի Պետրոս ծառայս Աստուծոյ յանուն Ճօր և Որդւոյ և Ճողովոյն սրբոյ":
- Հ. Ի՞նչ օգուտ է ստանում մլրտեալն: Պ. Արբուելով սկզբնական մեղքէն՝ լինում է որդեզիր Ճօր Աստուծոյ, ժառանգակից Քրիստոսի և տաճար Ճողովյն սրբոյ:
- Հ. Ապիստակ կտաւը ի՞նչ նշանակութիւն ունի: Պ. Ակզենական անմեղութեան:
- Հ. Իսկ վառած մոմերը: Պ. Ճաւատոյ լուսի և պայծառութեան:
- Հ. Կարօտն ի՞նչ է նշանակում: Պ. Պասկ, այսինքն է յաղթութեան նշան,

- որ յաղթելով անաստուածութեան՝ մտնում է Ճշմարիտ Աստուածածանութութեան մէջ: Հ. Իսկ համբուրելին: Պ. Պաշտպանութիւն և միաւորութիւն Քրիստոսի հետ:
- ԴԱՍ ԻՐ.
- Գ Ր Ո Շ Մ.
- Հ. Օ ի՞նչ է Դաշնութիւն: Պ. Դրոշմ կնշանակէ կնիք:
- Հ. Ե՞րբ է կատարւում այս խորհուրդը: Պ. Մկրտելոց յետոյ:
- Հ. Ի՞նչպէս եմք կատարում: Պ. Քահանայն սուրբ Մեռոնով օծում է մլրտեալի նշանաւոր անդամները, որք են՝ Ճակատ, ականջներ, աչքեր, քիթ, բերան, ձեռներ, սիրտ, թիկունք և ոտներ:
- Հ. Ի՞նչ պարգև է ստանում դրոշմելով: Պ. Պատասխան կատարելու համար առաջնահանձնութեան է:

Պ. Մշկտեալն զբոշմի օծութեամբ ընդունում է Հողւցյն Արքյ պարզեները, զօրանում է և արիանում է հաւատքի մէջ, և լինում է զինուոր Քրիստոսի:

ԴԵՍ ԴՊ.

Ճ Ա Գ Ո Ւ Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն :

Հ. Ի՞նչ կնշանակէ Հաղորդութեան:
Պ. Միութիւն կամ մասնակցութիւն, որ ճաշակելով Քրիստոսի Մարմինը և Արիւնը, որոց նիւթն է Արքագործեալ Հաց և զինի, միանում ենք Քրիստոսի հետ հոգեով:

Հ. Հայն ի՞նչ տեսակ պիտի լինի:
Պ. Յորենի ալիւր, և անխմոր եփած, այսինքն է բաղարջ:
Հ. Հայն ի՞նչ եմք կոչում հասարակաց բառով:
Պ. Կշլար:

Հ. Գիրին ի՞նչ պիտի լինի:
Պ. Ինչ տեսակ որ լինի, թէ կարմիր և թէ սպիտակ, բայց առանց խառնելու նորա մէջ ջուր:
Հ. Ի՞նչպէս պէտք է հաղորդուիլ:
Պ. Կախապէս խոստովանելով քահանայի առջև մեր գործեալ մեղքելը, և պաշխարելով:
Հ. Ըստանց ապաշխարութեան կարելի՞ է հաղորդիլ:

Պ. Ո՛չ երբէք, վասն զի անարժանութեամբ հաղորդողն կրկին խաչում է զՔրիստոս, և իւր անձը դատապարտում է:

Հ. Ի՞նչ օգուտ կտանայ արժանաւորութեամբ հաղորդողն:
Պ. Կա կմանայ Քրիստոսի հետ, և Քրիստոս կրնակի նորա մէջ, և նա Քրիստոսի մէջ:

ԴԱՍ ԻԳ.

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Հ. Ի՞նչ է նշանակում Ապաշխարհական:

Պ. Ապա աշխարիլ, այսինքն յետոյ լաց-
լիլ:

Հ. Ո՞ր մեղքերն է թողում:

Պ. Այս, զօր գործել եմք մկրտութենէն
յետոյ:Հ. Ի՞նչպէս է կատարւում այդ խոր-
հուրդը:Պ. Վրիստոնեայն գնում է քահանայի
մօտ, ծունկ է չոքում նորա առջև,
խոստովանում է իւր ամենայն յան-
ցանքները, և յետոյ ապաշխարելով
իւր արածների վերայ՝ ընդունում է
Ճստուծոյ թողութիւն քահանայի
միջնորդութեամբ:

Հ. Իսկ եթէ ուղիղ չխոստովանի՞:

Պ. Օձապէտ քահանայն տայ թողութիւն,
բայց Աստուած չէ թողնելու:Հ. Ապաշխարութիւնն քանի՞ բան է պա-
հանջում:Պ. Երեք, սրտանց զյշումն, ուղիղ խոս-
տովանութիւն, և ճշմարիտ ապաշխա-
րութիւն:

ԴԱՍ ԻԵ.

Զ Ե Մ Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Հ. Ի՞նչ է նշանակում Ձեռնադրու-
թիւն:Պ. Կանակում է ձեռք գնել, որովհետեւ
այս խորհուրդը կատարւում է աղօթ-
քով և ձեռք գնելով նորընծայի գըլ-
խին:Հ. Ի՞նչպէս է կատարվում ձեռնադրու-
թեան գործողութիւնն:Պ. Կախապէս եւլիսկոպոսն քննում է
նորընծայի ուսումը, վարքն ուբարքը,
յետոյ նորընծայն ներկայանում է եկե-
ղեցուն, և ժողովուրդն ձայն է տալիս

- արժանիէ, ապա Եղիսկոպոսն ազօթե-
լով և ձեռք դնելով նորա գլխին՝ տա-
լիս է սրբազն աստիճանները:
- Հ. Ո՞րպիսի անձն պէտք է լինի քահա-
նայացուն:
- Պ. Ուսեալ Աստուածաշունչ սուրբ Գիր-
քը, Կրօնաղիտութիւն, Աստուածա-
բանութիւն, Եկեղեցական պատմու-
թիւն, բարոյականութեամբ առաքինի
և պարկեցու, և չպիտոյ է ունենալ
մարմնական արատութիւն կամ պա-
կասութիւն:
- Հ. Ո՞յք են քահանայ ընտրողները:
- Պ. Առաքելական սահմանադրութեամբ և
վաղեմի աւանդութեամբ է Եկեղեցա-
կանք և ժողովուրդը Եկեղեցւոյն, յո-
րոյ վերայ ունի ձեռնադրիլ:
- Հ. Եկեղեցական աստիճաններն մէկ բա-
ռով ի՞նչ են կոչւում:
- Պ. Քահանայապէտութիւն:
- Հ. Քանի՞ աստիճան ունի Քահանայա-
պէտութիւնն:

Պ. Ինն, որք են.

- 1) Դունապանութիւն:
 - 2) Դպրութիւն:
 - 3) Երդմնեցուցութիւն:
 - 4) Ջահընկալութիւն:
 - 5) Կիսասարկաւագութիւն:
 - 6) Սարկաւագութիւն:
 - 7) Վահանայութիւն:
 - 8) Եպիսկոպոսութիւն:
 - 9) Հայրապետութիւն, որ կոչի և
կաթողիկոսութիւն կամ Պատրիար-
քութիւն:
- Հ. Քահանայն քանի՞ խորհուրդ է կա-
տարում:
- Պ. Աեց խորհուրդներ՝ բաց ՚ի ձեռնա-
դրութենէն:
- Հ. Քահանայն ի՞նչ իշխանութիւն ունի:
- Պ. Կապել և արձակել զմարդն մեղքե-
րէն:
- Հ. Քահանայի պարտականութիւնն ի՞նչ
է:
- Պ. Հովուել Քրիստոսի ժողովուրդը, մա-

տակարարել սուրբ խորհուրդները, ու
սուցանել Աստուածային բանը, և որ
մեծն է բարի գործերով օրինակ լինիլ
ժողովրդեան:

Հ. Եպիսկոպոսն ի՞նչ իշխանութիւն ունի:
Պ. Եպիսկոպոսն քաց 'ի քահանայի պաշ-
տոնը կատարելէն՝ ունի իշխանու-
թիւն աստիճան տալու կղերիկոսաց և
քահանայ ձեռնադրելու, փրկչական և
սրբոց պատկերներ և խաչ, եկեղեցւոց
հիմքը, եկեղեցի, սեղանը և աւազանը
օրհնելու և օծելու:

Հ. Եպիսկոպոսը ո՞վ է ընտրում:
Պ. Այն վիճակի եկեղեցականք և ժողո-
վուրդն, ուր պակաս է Առաջնորդ:
Հ. Կաթողիկոսն ի՞նչ իշխանութիւն ու-
նի:
Պ. Բաց 'ի քահանայի և եպիսկոպոսի
պաշտօններ կատարելէն՝ ունի իշխա-
նութիւն եպիսկոպոս ձեռնադրելու,
մեռն օրհնելու, կանոնական թղթեր
գրելու, Առաջնորդներ կարգելու:

Հ. Կաթողիկոսը ո՞վ է ընտրում:
Պ. Բողոք Հայ ազգը — Եպիսկոպոսնք և
ամենայն հոգևորականք և աշխարհա-
կանք:
Հ. Եպիսկոպոսի և քահանայի ո՞ր անդամ-
ներն են օծում:
Պ. Ճակատն ու ձեռները:
Հ. Իսկ Կաթողիկոսի՞նք:
Պ. Կորա գլխին թափում են մեռնը, ցու-
ցանելով թէ նա միայն է անհատ և
հոգևոր Պալուխ ազգի:

ԴԱՍ Ի.Օ.

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե.

Հ. Ի՞նչ է նշանակում Անուանութեան:
Պ. Նշանակում է ամու սահին, այսինքն,
լուծը քաշող, օգնական:
Հ. Ամումութեան նպատակն ի՞նչ է:
Պ. Բազմանալ մարդկային ազգի, և հեռի
մաս մոլութենեն:
Հ. Ինչպէս է կատարելում այդ խորհուրդը:

Պ. Փեսայնու ու հարսն գնում են յեկեղեցին, և բազմութեան առջև յայտնում են իւրեանց փոխադարձ համաձայնութիւնը սիրելու և օգնելու միմեանց, և յետոյ քահանայն տալիս է հարսի ձեռքը փեսայի ձեռին, և աղօթելով նոցա վերայ՝ օրհնում է նոցապակը հրապարակաւ:

ԴԱՍ ԻՇ.

Ա Ե Բ Զ Ի Ն Օ Ֆ Ո Ւ Մ Ն.

- Հ. Օ լ ո ն չ է Ա ե ր ջ ի ն օ ժ ո ւ հ ն :
- Պ. Ա յ ն է որ հիւանդները օծում են օրհնեալ իւղով :
- Հ. Ի շ պ է ս է կատարւում :
- Պ. Վ ա հ ա ն ա յ ն գնում է հիւանդի տուն խաչով և աւետարանով, կարգում է աղօթք և օծում է օրհնեալ իւղով :
- Հ. Ի շ ն չ է նորա զօրութիւնը :
- Պ. Կ ե ր ե լ ս մեղքերը թողնում է, և զհա-

ւատով հիւանդը առողջացնում է:
 Հ. Կ ա ր ե լ ի ՞ է առանց իւղի կատարել :
 Պ. Ա յ ն, ինչպէս կատարում է ձայաստանեայց Եկեղեցին միայն աղօթքով, ունենալով հիւր Վ ր ի ս տ ո ս ի խօսքը՝ „ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բըժշկեցեն”:

ԴԱՍ ԻՇ.

ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒԽՏ ՔՐԻՍՏՈՆՅԻ

- Հ. Ի ՞ ն չ է նշանակում Վ ր ի ս տ ո ս ի ե ր կ ր ո ր դ գ ա լ ո ւ ս տ ը :
- Պ. Ա յ ն, որ Վ ր ի ս տ ո ս պիտի ե ր կ ր ո ր դ անգամ զայ Ա ս տ ո ւ ա ծ ա յ ի ն փառքով ու զօրութեամբ գատել թէ կենդանիքը և թէ մեռեալները :
- Հ. Ի ՞ ն չ զանազանութիւն կայ առաջին և ե ր կ ր ո ր դ գ ա լ ս տ ե ա ն մ ջ :
- Պ ե ծ զանազանութիւնն վասն զի առաջին գալուստն էր մեղաւորները փրկե-

Եռ, իսկ երկրորդումը՝ դատապարտելու զնուա:

Հ. Ե՞րբ պիտի զայ:

Պ. Ժամանակը մեզ չայտնի չէ, որովհետեւ Քրիստոս չայտնեց, բայց այսչափ գիտեմք, որ աշխարհի վերջին կլինի:

Հ. Ի՞նչ էր չայտնելու պատճառը:

Պ. Որ մեք պատրաստ լինիմք և միշտ բարի գործեմք:

ԴԱՍ ԻԹՅ.

ՑԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՌԵԼՈՅՑ:

Հ. Ի՞նչ կնշանակէ Յարութիւն մեռելոց:

Պ. Ե՞ն, թէ մեր հող դարձած մարմինները կրկին պիտի կենդանանան և միաւորին մեր հոգւոյ հետ:

Հ. Մեր մարմիններն որպիսի կլինին յարութեան ժամանակի:

Պ. Անապական և անմահ:

Հ. Կենդանի մնացածներն ի՞նչ կլինին:

Պ. Նոքա ևս յանկարծ կիոխուին յարուցեալներու նման:

ԴԱՍ Լ.

ՎԵՐՁԻԿ ԴԱՏԱՍՑԱՆ:

Հ. Ակըլջին դատաստանը ո՞վ կդատէ:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Մի օրինամիկ կլինի ամենքի վեճակն:

Պ. Ո՛չ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Դատաւորն կբաժանէ արդարները մեղաւորներէն, և ամենին իրանց գործերին համեմատ կտայ վարձ ու պատիժ, — կեանկը յաւիտենական և տանջանկ յաւիտենական:

Հ. Օի՞նչ է յաւիտենական կեանկը:

Պ. Է այն երջանիկ վեճակն, որի մջ արդարներն կվայելին հանդիսատ և ուրախութիւն, զոր ոչ մարդոյ աչք չէ տեսէլ և ոչ ականջն է լսել:

- Հ. Օքնչէ է տանջանք յաւիտենական:
- Պ. Ե այն ամենաթշուառ վիճակ, որի մէջ
մեղաւորներն զբկուած կլինին Աստու-
ծոյ տեսութենէն, արդարներու մաս-
նակցութենէն, և յաւիտեան կտանջ-
ուին անշեշ կրակով և անքրուն որ-
դունքով:

ԽԸ 1.Յ.

ՅՈՅՍ:

- Հ. Օքնչէ Յօյսն:
- Պ. Ե ակնկալութիւն ստանալու այն ա-
մենայն բարութիւնքը՝ զորս Աստուած
խոստացել է տալ մարդուն այն կեան-
քի մէջ :
- Հ. Ո՞ր է Աստուծոյ խոստումն:
- Պ. Յաւիտենական կեանք — երկնքի ար-
քայութիւն:
- Հ. Քրիստոս տուամ մեզ այդ յոյսը:
- Պ. Եյն, քանի որ աշխարհիս վերայ եր,

- քարոզելով յաւիտենական երանու-
թեան վերայ:
- Հ. Քանի՞ են աւետարանական երանու-
թիւնքն, և որոց խոստացաւ:
- Պ. Ինն, որը են:
- 1) Երանի հոգւով աղքատներուն, որ նոցա է երկնքի արքայութիւնն:
 - 2) Երանի սղաւորներուն, զի նոքա
կմիմիթարուին:
 - 3) Երանի հեղ մարդկանց, զի նոքա
կժառանգեն երկիրը:
 - 4) Երանի նոցա, որ քաղցած ու ծա-
րաւ են արդարութեան համար, զի նո-
քա պիտի կշտանան:
 - 5) Երանի ողորմածներուն, զի նոքա
կդաննեն ողորմութիւն:
 - 6) Երանի սրտով սուրբերուն, զի
նոքա զԱստուած կտեսնեն:
 - 7) Երանի խաղաղներուն, որ Աստու-
ծոյ որդիք կը կոչուին:
 - 8) Երանի հալածեալներուն արդա-

ըութեան համար, զի նոցա է երկնքի
արքայութիւնն:

9) Երանի նոցա, երբ որ կսախատ-
ուին և կհալածուին, և սուտ կխօսին
նոցա վերայ ամենայն չար բան Քրիս-
տոսի համար, թող ուրախանան, փան
զի նոցա վարձն շատ է երկնքում,

(Սառ. Ե. 2—13):

ԴԱՅ Լ. Բ.

ԱԷՐ.

Հ. Օ. Բ. ն. է Աէրն:

Պ. Աէրն է հոգւոյ մի այնպիսի զգացումն,
որ զարթեցնում է մարդոյ միաքը սի-
րել զԱստուած, որպէս իւր Երարիչ
և Կախախնամող, և իւր ընկերը՝ ինչ-
պէս իւր անձը:

Հ. Ի. ն. բանի մէջ է կայանում սէրը:

Պ. Աստուծոյ կամքի կատարելու մէջ:

Հ. Օ. Բ. ն. են կամք Աստուծոյ:

Պ. Են սուրբ օրէնք Կորա:

Հ. Քանի՞ տեսակ են օրէնքներն:

Պ. Երկու՝ բնական և դրական, կամ ան-
դիր և զրաւոր:

Հ. Օ. Բ. ն. է բնական օրէնք:

Պ. Ե Խղճմանքն, զոր Աստուած սահ-
մանել է մարդոյ մէջ որպէս դատաւոր
չարն ու բարին որոշելու:

Հ. Ո՞ր է անդիր օրէնքն:

Պ. Ե յն, զոր Աստուած տուաւ Կահա-
պետաց մինչև Մովսէս:

Հ. Ո՞ր է զրական կամ զրաւոր օրէնք:

Պ. Ե յն ամենայն օրէնքներ, զորս տուաւ
Աստուած Նըկից ազգին Մովսէս մար-
դարէի ձեռքով:

Հ. Ո՞ր տուաւ:

Պ. Ախնա սարի վերայ, (որ յիսուն օրն էր
Եղիսակոսուն զուրս գալէն), և կոչ-
ում է Նին ուխափ օրէնք:

Հ. Քանի՞ է բաժաննում Նին օրէնքն:

Պ. Երեք, Եկեղեցական, Քաղաքական,
Բարոյական:

Հ. Օ. Բ' նչ է եկեղեցականն:

Պ. Են կանոններ, զոր Աստուած տուաւ Արէից եկեղեցւոյ արտաքին պրագործութեանց և արարողութեան համար, և պիտոյ էր տեել մինչև Քրիստոսի մարմանանալը:

Հ. Ո՞ր է Քաղաքականն:

Պ. Են ասհմանադրութիւննք Արէից քաղաքական և դատաստանական գործերի համար, և վերջացան Երուսաղեմի քանդուելով:

ԴՅՍ 1.Գ.

ՏԵՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ:

Հ. Ո՞ր է բարոյական օրէնք:

Պ. Տասն պատուիրանքն՝ զրած Աստուծոյ ձեռովլ երկու քարէ տախտակների վրայ:

Հ. Ասա տասն պատուիրանքը:

Պ. 1) Ես եմ Տէր Աստուած քո, բացի

ինձմին ուրիշ աստուածներ չունենաս:

2) Առողքեր չշինես, և ոչ երկրոպագութիւն տաս և ոչ պաշտես:

3) Կո Աստուծոյ անունը չժիշես ունայն բաների վերայ:

4) Ե արաթ օրը սուրբ պահես, և ոչինչ աշխարհական գործ չգործես, այլ նուիրես քո Տէր Աստուծոյն:

5) Պատուիր քո հայր ու մայրը, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս:

6) Մի սպանաներ:

7) Մի շնար:

8) Մի գողանար:

9) Առաջ վկայութիւն չտաս քո ընկերիդ համար:

10) Զցանկանաս քո ընկերի տանը, և ոչ նորա բոլոր կայքին:

Հ. Քանի՞ են բաժանվում պատուիրանքները:

Պ. Երկու Աստուածսիրութիւն և ընկերակիրութիւն:

- Հ. Աստուածսիրութեան օրէնքը քանի
են:
- Պ. Առաջին չորս յօդուածներն:
- Հ. Խսկ ընկերսիրութեմն:
- Պ. Ա երջին վեց յօդուածներն:
- Հ. Ընկերսիրութիւն ի՞նչ կնշանակէ:
- Պ. Սիրել զամենայն մարդ, որ ազգէ և
լինի, ինչպէս սիրում ենք զմեղ, ցան-
կանալ և առնել նոցա բարի, որչափ
մեր կարողութիւնը կտայ, որովհետեւ
մէկ նախածնողներէն եմք առաջ եկած:
- Հ. Ո՞ր է զլուխ պատուիրանն:
- Պ. Աւր, վասն զի այն է զլուխ և լրումն
ամենայն օրէնքի:

ԴԵՍ 1.Դ.

ՆՈՐ ՈՒԽՏԻ ՕՐԷԿԱՔ.

- Հ. Զի՞նչ են օրէնք՝ Նոր ուխտի:
- Պ. Ե Աստուծոյ շնորհական խռստումն,
տուեալ Յիսուսի Քրիստոսի հաւա-

- տացեալներուն, որով կիրկուին և յա-
ւիտենական կեանք կժառանգեն:
- Հ. Ի՞նչ է պահանջում նոր ուխտի օրէն-
քըն:
- Պ. Ոիրել զԱստուած բոլոր անձնով, սրբ-
առվ և մաքով, և սիրել ընկերը՝ իր-
ըև մեր անձը:
- Հ. Ընկերսիրութեան համար Քրիստոս
ի՞նչ է պատուիրում:
- Պ. Սիրեցէք ձեր թշնամիքը, բարի արէք
ձեր ատելեաց, և աղօթք արէք նոցա
վերայ՝ որք զձեղ չարչարումն և հա-
լածումն:
- Հ. Քրիստոսի վերջին կտակն ի՞նչ էր:
- Պ. Քրիստոս մատնութեան զիշերին ա-
սաց Առաքելոց, “նորանով կճանաչեն
զձեղ՝ որ իմ աշակերտներ էք, եթէ
զմիմեանս կսիրէք, որպէս ես սիրեցի
զձեղ. վասնորոյ այս է իմ նոր պատ-
ուիրան, որ դուք զմիմեանս սիրէք:

ԴԱՍ 1.Ե.

ԱՆՕԹ.Ք.

Հ. Օ.ի՞նչ է Աղօթք:

Պ. Աղօթքն է մարի և սրտի բարձրանալ
առ Աստուած:

Հ. Քանի՞ կերպ կլինի աղօթքն:

Պ. Երկու, առանձին և հրապարակաւ:

Հ. Ո՞ր է առանձնականն:

Պ. Ե այն, երբ առանձին եմք աղօթում
մեր սրտի և տան մէջ :

Հ. Ո՞ր է հրապարակականն:

Պ. Ե այն, երբոր հաւատացելոց ընկերու-
թիւնն կատարում է եկեղեցում կամ
արտաքոյ նորա միաբանական Աստ-
ուածովաշտութիւն:

Հ. Ո՞ր է զլխաւոր աղօթքն:

Պ. Տէրունական կոչուածն:

Հ. Ասմ:

Պ. Հայր մեր որ յերկինս ես: Սուրբ եղի-
ցի անուն Քո, եկեսցէ արքալութիւն

Քո, եղեցին կամք Քո որպէս յերկինս
և յերկրի: Զհաց մեր հանապաղորդ
տնւր մեզ այսօր: Եւ թող մեզ զպար-
տիս մեր, որպէս և մեք թողումք մե-
րոց պարտապանաց: Եւ մի տանիք
զմեզ՝ ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի
չարէ: Զի քո է արքայութիւն և զո-
րութիւն և փառք յաւիտեանս:

ԴԱՍ 1.Օ.

Հ. Եկեղեցին մանելիս ի՞նչ պիտի ասեմք:

Պ. Մատից ՚ի տուն ՚Յո՛ և երկիրապազից ՚ի
տաճար սուրբ ՚Յո՛ երկիրազիւ ՚Յո՛:

Հ. Խսկ մտած ժամանակի:

Պ. ՚Ի մէջ տաճարիս և առաջի աստուած-
ընկայ և պայծառացեալ սուրբ նշա-
նացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ
երկիրազիւ երկիրապազանեմք, զառիր և
զհրաշալի և զյաղթող զակրութիւնդ
Քո օրհնենեմք և փառաւորեմք, և Քեզ
մատուցանեմք զօրհնութիւն և զփառս

Հօր և Որդւց և Հոգւոյդ որբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ԴԱՍ 1.Ե.

ԱՆՕԹՔ ԱՌԱԽՈՏԵԱՆ:

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով,
յնծացաք և ուրախ եղաք զամենայն աւու-
րըս կենաց մերոց:

Ուրախ եղաք վոխանակ աւուրցն՝ յորս
խոնարհ արարեր զմեղ, և ամացն՝ յորս տե-
սաք դչարչարանս:

Հայեա Տէր 'ի ծառայս Քո, և 'ի գոր-
ծըս ձեռաց Քոց, և առաջնորդեա որդւոց
նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ 'ի վե-
րայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա մեզ
Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա
մեզ:

Լուսովդ քո Վրիտառն ամենեքեան լու-
սաւորեցաք, և 'ի սուրբ Խոսչ Քո Փրկիչ

Հաւատացեալքս ապաւինեցաք : Լուր
մեզ Աստուծ Փրկիչ մեր, և արա առ
մեզ զղորմութիւն Քո մարդասէր:

ԴԱՍ 1.Ը.

ԱՆՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ:

Տէր Աստուծ մեր Դու պահեա զմեզ
խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յա-
մենայն ժամանակի: Բնդ սուրբ երկիւղ
քո բեկուեալ պահեա զմիաս և զեսորհուր-
դըս մեր: Որպէս զի յամենայն ժամ Քու
պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամ-
ւոյն: Եւ Քեզ հանցուք զօրհնութիւն
և զփառս Հօր և Որդւց և Հոգւոյդ սրբոյ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ԴԱՍ 1.Թ.

ԱՆՕԹՔ ԱՌ ԵՒՄՈՒ:

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն Տէր Յի-
սուս, յորժամ երեխս փառօք Հօր ընդ

ամսությունուրս, յայնժամ մեք մի՛ ամառ
չեսցուք յուսացեալքս՝ ի Քեզ, այլ զօ-
րութեամբ քով մեծաւ բերկրեսցուք ընդ
աջմէ քումմէ, որպէս որդիս լուսոյ Առդիս
տունջեան:

Դ. Հ. Յանձն. Բանկ.
1898 - 5 ԽՈՆԻ

Գ. Ա. Յանձն. Ա. Ա. Մանուկյան
Կենտ. Բիոլոց. Կիր.
Ա. Յ. Օթք. Ա. Ա. ՍՈՒՐԵ. ԿՈՅՈՒԿ. ՕԲԸ.

Վնկանիմք առաջի քո սուրբ Սատուա-
ծածին, և աղաջեմք զանարատ զկոյսդ՝ բա-
րեխոսեան վասն անձանց մերոց. և աղա-
ջեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ՝ ի փոր-
ձութենէ և յամենայն վտանգից մերոց:



3345

3345

ՀՀ Ազգային գրադարան



NL0030259

3345

3242

